

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртутян» (образование) еженедельник 02.02.2022թ. չորեքշաբթի թիվ 5 (1030)

Մայր թատրոնը 100 տարեկան է

Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը տոնում է հիմնադրման 100-ամյակը:

Հոբելյանի շրջանակում կազմակերպված հրավերքին ներկա են եղել ՀՀ ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը**, նախարարի տեղակալ **Արա Խզմալյանը**, թատրոնի ղեկավար և նախկին գործիչներ, հրավիրյալ այլ անձինք: Ողջույնի խոսքով հանդես են եկել նախարար **Վահրամ Դումանյանը**, թատրոնի տնօրեն **Վարդան Սկրտչյանը**, թատրոնի գեղարվեստական ղեկավար, ՀՀ ժողովրդական արտիստ **Արմեն Էլբակյանը**:

Թատրոնի տնօրեն **Վարդան Սկրտչյանը** հակիրճ ներկայացրել է թատրոնի վերջին տարիների ձեռքբերումները և առաջիկա ծրագրերը՝ ներառյալ սպասվելիք մեծ պրեմիերան, թատերական պաստառների միջազգային փատատոնը:

«*Ես ուզում եմ հաստատել, որ մենք նոր դեմքով ենք կանգնել ապագային ընդառաջ*», - ասել է **Վարդան Սկրտչյանը**՝ երախտագիտության խոսք ուղղելով այն մշակութային գործիչներին, որոնց աշխատանքի ու նվիրման շնորհիվ թատրոնը կերտել է իր մեկդարյա պատմությունը:


ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը** փառավոր հոբելյանի կապակցությամբ շնորհավորել է թատրոնի ողջ անձնակազմին, հազարավոր հանդիսականներին:

«*Մեկ դար առաջ բացվեց առաջին պետական թատրոնի վարագույրը՝ բացելով ճանապարհի դեպի պրոֆեսիոնալ թատերական գործունեության ամրապնդում, համաշխարհային դասական դրամատուրգիայի յուրացում, ռեժիսորական որոնումներ ու դերասանական բացառիկ դրսեւորումներ: Փառք ու խոնարհում բոլոր մեծանուն և ականավոր գործիչներին, որոնց շնորհիվ կայացան հայ թատերական մշակույթը, դերասանական ու ռեժիսորական դպրոցը*», - ողջույնի խոսքում նշել է **ԿԳՄՍ նախարարը**՝ հավելելով, որ նախարարության աջակցությամբ և համագործակցությամբ թատրոնն այսօր ապրում է բովանդակային և ոճական նորոգումների իր շրջանը: Ըստ **Վահրամ Դումանյանի**՝ իրենց առաջնային խնդիրն է ունենալ բարեկարգ և ներկայանալի թատրոն, ունենալ բարձրակարգ ներկայացումներ, կրթական-մշակութային նախագծեր և լեցուն դահլիճներ, ինչի ուղղությամբ իրականացվում են հետևողական աշխատանքներ:

Թատրոնի գեղարվեստական ղեկավար **Արմեն Էլբակյանի** հորդորով՝ ներկաները ծափողջույններով հիշել են մայր թատրոնի պատմության էջերում իրենց վաստակն ամրագրած մեծերին:

«*Նրանք, ովքեր ինձնից առաջ են աշխատել, փորձել են թատրոնում պահպանել ավանդույթները և ազգային մտածողությունը: Նույնը փորձում ենք անել նաև մենք՝ բեմ բարձրացնելով թե՛ համաշխարհային, թե՛ ազգային գրականությունը, փոխանցելով և կիսելով մեր հույզերն ու հոգսերը*», - նշել է **Արմեն Էլբակյանը**:

Հյուրերին կատարումներով ողջունել է Հայաստանի պետական կաներային նվագախումբը:



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի շնորհավորական ուղերձը՝ ՀՀ զինված ուժերի կազմավորման 30-րդ տարեդարձի առթիվ

Սիրելի՛ հայրենակիցներ, Ձինված ուժերի հարգելի՛ ներկայացուցիչներ,

Բոլորիս շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման 30-րդ տարեդարձի կապակցությամբ:

Այս երեք տասնամյակների ընթացքում հայկական բանակն ունեցել է և փառապանծ օրեր, և անցել բազմաթիվ փորձությունների միջով:

Հայ ժողովուրդն արժանվույնս է գնահատում մեր բոլոր հերոս տղաների՝ այն զինվորների, սպաների, գեներալների, կամավորների սխրագործությունները, ովքեր մինչև վերջ, անմնացորդ պայքարել են հանուն Հայրենիքի պաշտպանության, անվտանգության, ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության ապահովման:

Այսօր մենք գնում ենք Ձինված ուժերի հետագա զարգացմանն ուղղված համակարգային բարեփոխումների ճանապարհով՝ վերագնահատելով բանակի անցած ճանապարհը, ունեցած առավելությունները, բացթողումներն ու խնդիրները: Հայաստանի Հանրապետությունն ունենալու է պրոֆեսիոնալ բանակ, և կառավարությունն այդ աշխատանքը կատարելու է անհոգնել՝ առանց ընկճվելու և առանց հոռետեսության, մեր ապագա անվտանգային միջավայրը կառուցելու ճանապարհին լավատեսությամբ զինված: Բանակի մարտունակությունը, սպառազինությունը, ծառայության պայմանները բարելավելը մեր առաջնահերթությունն է:

2018 թվականից ՀՀ կառավարությունը սկսել է զինծառայողների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավման գործընթացը, և այն կրելու է շարունակական բնույթ: Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր զինվոր, սպա պետք է զգա պետության աջակցությունը, և այդ գործում մենք լինելու ենք հետևողական: Ձինվորական, սպայական ծառայությունը պիտի լինի հանրային առանձնահատուկ հարգանքի և պատկառանքի առարկա, ինչը պիտի արտահայտվի նաև զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական հատուկ երաշխիքների համակարգով:

Սրան զուգահեռ՝ պիտի բարձրանան նաև ծառայության գնահատման ինտելեկտուալ, պրոֆեսիոնալ, ֆիզիկական ու հոգեբանական պատրաստության չափանիշները, և այս կետերի վրա պետք է հենվի հանրային հարգանքն ու պատկառանքը բանակի նկատմամբ:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Բանակի օրվա առիթով՝ առանձնահատուկ շնորհավորում եմ Հայոց բանակի ձեւավորման հիմքում եղած բոլոր ազատամարտիկներին, կամավորներին, զինվորներին, սպաներին, գեներալներին:

Շնորհակալություն եմ հայտնում մեր Հայրենիքի բոլոր պաշտպաններին, բոլոր զինծառայողներին այն զոհողությունների համար, որոնց զնացել են մեր երկրին ու ժողովրդին՝ ստեղծված բարդ պայմաններում անմնացորդ ծառայելու համար:

Շնորհակալություն եմ հայտնում նաև նրանց ընտանիքներին համբերության, տոկունության և իրենց զինծառայող հարազատների ու Հայրենիքի թիկունքին ամուր կանգնելու համար:

Խոնարհվում եմ մեր հերոս նահատակների առաջ. նրանց հիշատակն անմահ է, գործը՝ սրբազան:

Աստված պահպան Հայոց բանակին:



Արցախ

Մայր աթոռ

Մեր աչքի լույս՝ Հայոց բանակ

Արցախում մի շարք միջոցառումներ են կայացել Հայոց բանակի օրվան նվիրված, ինչպես կրթությամբ, այնպես էլ հանրային տարբեր կառույցներում հոգեւոր եւ աշխարհիկ մշակույթների միաձուլմամբ:

Հետաքրքիր մրցույթների շարքում էր Արցախի պետական համալսարանի պատմության եւ իրավագիտության ֆակուլտետի պատմության եւ քաղաքագիտության ամբիոնի նախաձեռնությամբ կայացած օլիմպիադան «Հայոց պատմություն» առարկայից: Մասնակիցները տարբեր համայնքների դպրոցների 9-12-րդ դասարանների վեց տասնյակից ավելի աշակերտներն էին:



Ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Նունե Սարումյանը** ողջունել ու շնորհավորել է մասնակիցներին տոնի առթիվ խորհրդանշական համարելով հենց այդ օրը նման մրցույթ կազմակերպելը:

«Սեփական ժողովրդի պատմությունն ուսումնասիրելն ու իմանալը բոլոր ժամանակներում էլ կարեւոր է, այն առանձնահատուկ է հատկապես անցյալի սխալներից դասեր քաղելու, սխալները շտկելու, ներկան ու ապագան ճիշտ կառուցելու հրամայականով»,- նշել է Ն.Սարումյանը: Նրա խոսքով առարկայական օլիմպիադան իր մեջ նաեւ մասնագիտության ընտրության հարցում ուղղորդող դերակատարություն ունի, իսկ լավ պատմաբանը մեր դժվարին օրերում սերունդների մեջ ազգային արժեքահանակարգի ձեւավորման ու ամրապնդման բարձր առաքելությամբ է: Ուրախալի է, որ օլիմպիադայի անցկացումը լայն արձագանք է ունեցել աշակերտների եւ ուսուցիչների շրջանում, ինչն էլ փաստում է հայոց պատմության հանդեպ հետաքրքրության կենսունակության մասին: Բուհ-դպրոց համագործակցության ակտիվացման համար կարեւոր են համատեղ միջոցառումները՝ տվյալ առարկայի դասավանդման նոր մեթոդների ներդրմամբ:

Օլիմպիադայի արդյունքներն ամփոփվել է ԱրԴՀ-ի պատմության ու քաղաքագիտության ամբիոնի պատմաբաններից կազմված գանձնաժողովի կողմից: Արդյունքները զոհանուցիչ են, մրցանակները՝ պատվոգրեր եւ արժեքավոր գրքեր, հասել են իրենց տերերին:

ԱՀ ԿՄՍ նախարարության կազմակերպած «Մենք կանգուն ենք մեր լեռների պես» խորագրով ասմունքի հանրապետական փուլը եւս նվիրված էր Հայոց բանակի օրվան: Մասնակիցները շրջանային (քաղաքային) փուլը հաղթահարած հանրակրթական դպրոցների աշակերտներ էին, ՄԴՄԿ-ների սաներ՝ երկու՝ 9-12, 13-16 տարիքային խմբերով: Մրցանակային երեք հորիզոնականները եւ խրախուսական տեղերն զբաղեցրածներն արժանացել են նախարարության դիպլոմների եւ նվերների:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ք. Ստեփանակերտ,
մեր սեփական թղթակից

Բանակի օրվա առիթով կատարվեց Հանրապետական մադթանք

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Արմավիրի թեմի Սուրբ Աստվածածին եկեղեցում (ք. Էջմիածին), Հայոց բանակի օրվա կապակցությամբ կատարվեց Հանրապետական մադթանք: Սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ ԶՈւ բարձրագույն սպայական կազմի ներկայացուցիչներ, Մայր Աթոռի միաբաններ եւ ՀՀ ԶՈւ Հոգեւոր Առաջնորդության գնդերեցներ:

Հոգեւոր դասը եւ արարողությանը ներկա զինվորականներն ու ժողովուրդը աղոթք բարձրացրեցին առ Աստված Հայաստանի եւ Արցախի խաղաղության, անասանության ու Հայոց բանակի հաղթական ընթացքի համար: Այնուհետեւ Ամենայն Հայոց Հայրապետը Հայոց բանակի օրվա առիթով իր խոսքն ուղղեց եկեղեցում ներկա սպաներին, զինվորներին, գնդերեցներին եւ հավատացյալներին. «Այսօր համախմբվել ենք Սուրբ Էջմիածնում Հայոց բանակի ստեղծման 30-ամյակի առիթով աղոթելու մեր երկրի խաղաղության համար, եւ հայցելու, որ Տիրոջ օրհնությունը, պահպանությունն ու զորակցությունը միշտ լինեն Հայոց բանակի հետ: Մեր հայրենիքի անկախությանը հաջորդած երեք տասնամյակում մեր բանակն անցավ հնարավոր ու անհնարին բոլոր փորձություններով, անցավ կազմավորման դժվարին ճանապարհը: Պարտադրված արցախյան պատերազմում փառավոր հաղթանակներ կերտեց, նաեւ սպրեց 44-օրյա վերջին պատերազմի արհավիրքների դառնություններն ու ցավը: Այդ իսկ պատճառով բանակի տարեդարձի ակնկալված ուրախությունը չէ, որ պարուրում է մեր սրտերն այսօր, այլ սոսկալի մորմորը մարդկային եւ տարածքային ծանր ու վշտազին կորուստների եւ դեռեւս չամոքված կակիծը մեր հոգեւոյս նահատակների: Այսօր վերստին մեր հավաքական աղոթքով Աստծո արքայությունն ենք հայցում մեր զոհված հերոսների անմահ հոգիների համար, իսկ մեր հրամանատարներին ու զինվորներին, ովքեր քաջաբար մաքառեցին ու շարունակում են իրենց նվիրյալ ծառայությունը հայրենիքին, մտքում հայկյան ոգի եւ հայկյան բազկի հաղթություն, ամրություն, կրողվել են իմաստություն:

Սիրելիներ, մեր ժողովուրդը պատմության ընթացքում հաճախ է հայտնվել անեւտարբեր աշխարհաբաղադրական բարդ իրադրություններում, երբ հարկադրված է եղել կենաց ու մահու պայքար մղելով պաշտպանել հայրենի հողն ու սրբությունները՝ անվարան վկայելով իր աստվածսիրությունն ու հայրենասիրությունը: Դարեր շարունակ «զի Աստուած ընդ մեզ է» քրիստոնեական խորը համոզումը եւ «վասն հաւատոյ, վասն հայրենեաց» ոգեշունչ կարգախոսը առաջնորդող են եղել հայոց զորականներին՝ ուղեւորելով հայրենյաց պաշտպանների ազգանվեր սրբազան առաքելությունը: Այսօր եւս մեր կյանքում Աստծո ներկայության գիտակցությունն ու «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» նշանաբանը պետք է լինեն յուրաքանչյուր բանակային կյանքի հավատամքն ու հիմքը: Մեր բանակի կազմավորման 30-ամյա տարեդարձի հանգրվանը առիթ է մեր զավակների անձնորհի ծառայության գնահատման եւ արժեւորման, առիթ է նաեւ ինքնառացնության, գործված սխալներին եւ թերացումներին լուրջ անդրադարձի, որպեսզի ի գորու լինենք դիմակայելու մեր երկրի առջեւ ծառայած մարտահրավերներին եւ լավատեսությամբ մեր հայացքը ուղղելու դեպի ապագա: Պարտություններն անդառնալի եւ վերքերն անբուժելի են մնում, եթե մեզանում ուժ չենք գտնում վերհառնումի ու արարման, եթե զուլխ է բարձրացնում մեղավորներ փնտրելու ու պարտությունը իբրեւ անխուսափելիություն ներկայացնելու մոլուց



քը, եթե հավատքը չի բխում անկեղծ սրտից ու մաքուր մտքից, որ կարող է Աստծուն մասնակից դարձնել հայրենիքը շենացնելու եւ հզորացնելու առաքելությանը: Երբ հավատարիմ ենք գտնվել մեր առաքելությանը, մեր հայրենին ծաղկել է, սահմաններն անառիկ են մնացել, երբ անհավատարմության, անարդարության որոն է խառնվել մեր արդար ցորյանին, պարտվել ենք, նահանջ ապրել եւ երկիր կորցրել: Երբեք չմոռանանք առաքյալի խոսքը՝ «Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ կլինի մեզ հակառակ» (Հո. 8.31):

Սիրելիներ, Հայաստանի եւ Արցախի շուրջ ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ հրամայական է ժամանակների պահանջներին համարժեք Հայոց բանակի հզորացումը, որին պիտի նվիրվենք մեր ամեն կարելիությամբ: Մեր բանակի սրբազան առաքելությունը պիտի շարունակի մնալ մեր ժողովրդի ազգային ինքնության եւ ազատ ու անկախ կյանքի պաշտպանությունը մեր պատմական, հարազատ բնօրրանում, որտեղ մեր նախնիք իրենց հավատքի եւ հայրենասիրության անջնջելի հետքեր են թողել: Հայոց եկեղեցին եւ եկեղեցականը զորավիգ են Հայոց բանակին, ձեզ, սիրելիներ, հայրենիքի խաղաղության ու ապահովության, մեր արդար իրավունքների պաշտպանության կենսական հանձնառության մեջ: «Թշնամին թող չասի, թե հաղթեցի, կամ հալածիչներս ջնջան, եթե սասանվեմ» (Սաղմ. 12.5). մեր բոլորի հայրենանվեր ծառայությամբ պիտի բացառենք մեր հասցեին արտաբերումը սաղմոսասացի այս խոսքերի: Հավատում ենք, որ փորձություններին պիտի դիմազարավենք ազգային միասնությամբ եւ մեր կյանքը պիտի պայծառացնենք նոր հաղթություններով ու հայրենաշեն ձեռքբերումներով: Վերստին Հայրապետական Մեր սերն ու օրհնությունը բերելով ամենբի՞ր Հայոց բանակի 30-ամյակի առի-

թով՝ ի խորոց սրտի հայց ենք բարձրացնում առ Աստված հայրենիքի պաշտպանության դիրքերում իրենց կյանքն ընծայած մեր զավակների համար: Աղոթում ենք Հայոց բանակի հրամանատարական կազմի ու զինվորների ապահով ու անփորձանք ծառայության, հաղթանակների եւ հայրենի եզերքների խաղաղության ու անասանության համար: Թող Տիրոջ ողորմությունը, խնամքը եւ Սուրբ Աջի հովանին լինեն հայոց բանակի, մեր հայրենիքի, համայն աշխարհասփյուռ մեր ժողովրդի հետ, այսօր եւ միշտ. ամեն»:

Հանրապետական մադթանքից հետո Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում կատարվեց պարգևաբաշխություն:

Ի գնահատություն Հայրենիքին մատուցած ծառայությունների, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընդառաջ ՀՀ ԶՈւ Հոգեւոր Առաջնորդության միջնորդությանը, Հայոց եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանի արժանացրեց ՀՀ ՊՆ եւ ԱՀ ՊԲ մի շարք զինվորականների՝ գնդապետներ **Կարեն Ջալալյանին**, **Արթուր Պողոսյանին**, **Նորայր Մկրտչյանին**, **Գագիկ Ալաւնյանին**, **Արեն Սարգսյանին** եւ **Էրիկ Գրիգորյանին**: Նորին Արքեպիսկոպոսը «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշան հանձնեց նաեւ ՀՀ ՊՆ տեղակալ **Արման Սարգսյանին** եւ ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ **Տիգրան Ղարիբյանին**:

Ընդունելության ժամանակ ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանով զինծառայողների հոգեւոր եւ հայրենասիրական դաստիարակության գործում զգալի ավանդի համար մի շարք եկեղեցականներ արժանացան նախարարության պարգևների: «Մարշալ Բաղդասարյան» մեդալ շնորհվեց ՀՀ ԶՈւ Հոգեւոր առաջնորդ Հոգեշնորհ **Տեր Մովսես վարդապետ Սարգսյանին**: «Անդրանիկ Օզանյան» մեդալով պարգևատրվեցին Քրեակատարողական հիմնարկների հոգեւոր տեսուչ Հոգեշնորհ **Տեր Ռուբեն վարդապետ Չարգարյանը**, Սուրբ Շողակաթ վանքի վանահայր Հոգեշնորհ **Տեր Արիսաբեղա Տոնոյանը**, ավագ գնդերեց Արժանապատիվ **Տեր Պսակ քահանա Մկրտչյանը**, գնդերեցներ Արժանապատիվ **Տեր Մանուկ քահանա Չեյնալյանը** եւ **Տեր Տրդատ քահանա Գեւորգյանը**: «Դրաստամատ Կանայան» մեդալ շնորհվեց գնդերեցներ **Գագիկ սարկավագ Հակոբյանին**, **Սինաս սարկավագ Կարապետյանին**, **Լորիս սարկավագ Անդրեասյանին**, **Սիմոն սարկավագ Իգիթյանին**, **Գեւորգ սարկավագ Միրզոյանին**, **Արթուր սարկավագ Արամյանին**:

Պարգևաբաշխությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց ներկայից:



Տեսչական

Գրավորների արդյունքները մտահոգիչ են

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանը աշխատանքային խորհրդակցություն է հրավիրել՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2021 թվականի տարեկան հաշվետվության նախագծի քննարկման նպատակով:

Քննարկմանը մասնակցել են ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմնի ներքին աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Արթուր Ասոյանը, ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը, Կրթության տեսչական մարմնի ղեկավար Ալեքսանդր Շագաֆյանը, տեսչական մարմնի այլ ներկայացուցիչներ:

Կրթության տեսչական մարմնի ղեկավար Ալեքսանդր Շագաֆյանը հակիրճ ներկայացրել է 2021 թվականին իրականացված աշխատանքները՝ նշելով, որ 2021 թվականին Կրթության տեսչական մարմինը նախադպրոցական, հանրակրթական եւ արհեստագործական եւ միջին մասնագիտական (ՄԿՈՒ) ուսումնական հաստատություններում իրականացրել է 143 ստուգում՝ 139 ուսումնական հաստատություններում, որոնցից 120-ը՝ պլանային, մնացածը՝ ոչ պլանային՝ դիմում-բողոքների կամ այլ գերատեսչություններից ստացված գրությունների հիման վրա:

Ա. Շագաֆյանի խոսքով՝ ստուգումների ընթացքում 6-րդ, 9-րդ եւ 11-րդ դասարանների սովորողներին տրվել են գրավոր աշխատանքներ «Մաթեմատիկա» (հանրահաշիվ, երկրաչափություն) առարկայից: Գրավոր աշխատանքների միջոցով ստուգվել են սովորողների նախորդ երկու ուսումնական տարիների մնացորդային գիտելիքները:

Նշվել է, որ ըստ չափորոշիչային պահանջների՝ ուսումնական վերջին երկու տարվա ծրագրային նյութերը ներառող միջին բարդության առաջադրանքներով իրականացված «Մաթեմատիկա» առարկայի ստուգման արդյունքները մտահոգիչ են: Նշվել է նաեւ, որ 2022 թվականին տեսչական մարմինը պլանային ստուգումների շրջանակում մնացորդային գիտելիքի ստուգում կիրականացնի նաեւ «Հայոց լեզու» առարկայից՝ թելադրության միջոցով:

Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացված 18 ստուգումների շրջանակում գնահատվել են մանկապարտեզների կրթության կազմակերպման անվտանգու-



թյունը եւ մատչելիությունը COVID-19-ի առկայության պայմաններում:

15 դպրոցներում եւ 7 ՄԿՈՒ հաստատություններում իրականացված ստուգումների շրջանակում կատարվել է նաեւ կրթության կազմակերպման որակի գնահատում:

ՀՀ ուսումնական հաստատությունների՝ Արցախից տեղափոխված սովորողների կրթության իրավունքի իրացման նկատմամբ իրականացվել է վերահսկողություն՝ կրթական նոր միջավայրում նրանց ինտեգրմանը, հոգեբանական ներգրավմանը աջակցելու նպատակով: Իրականացվել են այդ սովորողների կրթական կարիքների վերաբերյալ հարցումներ, ուսումնասիրվել են նրանց շարժը, բովանդակային ստուգումների ընթացքում տրված գրավոր աշխատանքների արդյունքները:

Ուսուցիչների օգնությամբ՝ լրացուցիչ (ըստ անհրաժեշտության) ուսուցում ապահովելու նպատակով առանձնացվել են արցախցի սովորողների գրավոր աշխատանքները, «անբավարար» գնահատված սովորողների վերաբերյալ գրություններ են ուղարկվել ՀՀ ԿԳՄՍ նախարարին, Երեւանի քաղաքապետին, ՀՀ մարզպետներին այդ սովորողների ուսման որակը բարելավելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու առաջարկով:

Տեսչական մարմինը, գործընկերային աջակցություն ցուցաբերելով ՀՀ առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնին, Երեւան քաղաքի տարածքային կենտրոնի հետ համատեղ 319 եւ 348 ստուգայցեր է իրականացրել Երեւան քաղաքի

համապատասխանաբար 167 դպրոցներ եւ 153 մանկապարտեզներ:

Անդրադառնալով արձանագրված խախտումներին եւ բացթողումներին՝ Ա. Շագաֆյանը նշել է, որ նախադպրոցական հաստատություններում առավել շատ հանդիպող խնդիր մանկավարժական աշխատողների հաստիքային միավորների պակասն է եղել: Մասնավորապես, նախադպրոցական հաստատություններում բացակայել կամ համապատասխան նորմատիվներով նախատեսվածից պակաս են հատկացվել ֆիզկուլտուրայի հրահանգչի, երաժշտական դաստիարակի եւ մեթոդիստի հաստիքները: ՏԻՄ-երը, որոնց ենթակայությամբ գործում են նախադպրոցական հաստատությունները, որպես պարզաբանում նշել են, թե նշված հաստիքները չեն հատկացվել ֆինանսական միջոցների սղության պատճառով: Համախառն հանդիպող բացթողում է նաեւ խմբերի գերբեռնվածությունը:

Հանրակրթական դպրոցներում եւ ՄԿՈՒ հաստատություններում ամենաշատն արձանագրվել են մանկավարժական աշխատողների ընտրության ընթացակարգերի խախտումներ:

Նշենք, որ Կրթության տեսչական մարմնի գործունեության 2021 թվականի տարեկան հաշվետվությունն առաջիկայում կներկայացվի խորհրդի հաստատմանը եւ սահմանված կարգով կիրառարկվի:

Խորհրդակցության ընթացքում արծարծվել են մի շարք այլ հարցեր:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ի գիտություն

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը պաշտոնապես տեղեկացնում է՝ սոցիալական հարթակներում շրջանառվող այն տեղեկատվությունը, թե փետրվարի 7-ից դպրոցները, միջին մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններն անցնում են հեռավար կրթության, չի համապատասխանում իրականությանը:

Հեռավար կրթության անցնելու վերաբերյալ ԿԳՄՍ նախարարի նոր հրաման գոյություն չունի. տարածվող փաստաթուղթը անհեթեթություն է:

Մեր համաքաղաքացիներին խնդրում եւ հորդորում ենք հետեւել միայն պաշտոնական լրահոսին, որը մշտապես գեղտղվում է ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքում escs.am, ինչպես նաեւ սոցիալական հարթակների պաշտոնական էջերում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գործող կարգավորումներով՝ ուսումնական հաստատությունը կարող է անցնել հեռավար ուսուցման հիմք ընդունելով համաճարակային իրավիճակը: Այսինքն՝ եթե կան ուսումնական հաստատություններ, որտեղ համավարակի դեպքերը որոշակի տոկոսի են հասնում, ապա նրանք ժամանակավոր՝ 14 օրով անցնում են հեռավար կրթության այդ մասին գրավոր տեղյակ պահելով նախարարությանը: Համաճարակային իրավիճակի բարելավումից հետո ուսումնական հաստատությունները նորից անցնում են կատարում առկա ուսուցման:

Աշխարհի հետ

Համագործակցությունը կընդլայնվի

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանը ընդունել է «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի «Քաղաքական երկխոսություն. Հարավային Կովկաս» տարածաշրջանային կենտրոնի տնօրեն Թոմաս Շրապելին եւ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի Գյուլիսային Ամերիկայի եւ Եվրոպայի գրասենյակների համար պատասխանատու Յան Ֆիլիպ Կյոլբերնին: Հանդիպմանը ներկա է եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:



համալսարաններում կրթություն ստանալու հնարավորությունը: Հանրակրթության ոլորտում Վահրամ Դումանյանն առաջարկել է համագործակցել հանրակրթության նոր չափորոշիչի ներդրման շրջանակում դասագրքերի մշակման եւ ուսուցիչների վերապատրաստման ուղղությամբ: Նախարարը կարեւորել է նաեւ STEM

բաժնի շրջանային կենտրոնի տնօրեն Թոմաս Շրապելին իր հերթին նշել է, որ հիմնադրամն արդեն 5 տարի սերտորեն համագործակցում է ԿԳՄՍ նախարարության հետ, եւ այդ շրջանակում իրականացվել են մի շարք համատեղ ծրագրեր: Նա ընդգծել է, որ ՀՀ-ում հիմնադրամի գործունեությունը վերջին տարիներին քառապատկվել է:

«Հայաստանում հիմնադրամի համար ստեղծված են գերազանց պայմաններ, եւ մենք ունենք շատ լավ գործընկերներ: Սրանք այն նախադրյալներն են, որոնք մեզ հիմք են տալիս ընդլայնելու մեր գործունեության շրջանակը», - շեշտել է Թոմաս Շրապելը:

Նա փաստել է հիմնադրամի աջակցությամբ ՀՀ դպրոցների համար «Հասարակագիտություն» առարկայի դասագրքի եւ մեթոդական ուղեցույցի մշակման աշխատանքները: Թոմաս Շրապելի խոսքով՝ Արեւելյան գործընկերության որեւէ երկրում երբեւէ մնացորդային ծրագիր չի իրականացվել, եւ Հայաստանում դրա իրա-

գործումը բացառիկ երեւույթ է, ինչը վկայում է նաեւ հայկական կողմի շահագրգռվածության մասին:

Թոմաս Շրապելն անդրադարձել է նաեւ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ուսուցիչների վերապատրաստման ծրագրին՝ ընդգծելով, որ վերջին երկու տարիներին վերապատրաստվել է Երեւանի եւ ՀՀ մարզերի շուրջ 400 ուսուցիչ: Նա նաեւ տեղեկացրել է, որ հիմնադրամն աջակցում է հայ երիտասարդ, շնորհաշատ եւ տաղանդավոր մասնագետներին. 25 ուսանողի տրամադրվել է կրթաթոշակ: Թոմաս Շրապելը փաստել է, որ այս ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել կոնկրետ նպատակային ծրագիր՝ երիտասարդներին աջակցելու համար:

Հանդիպման կողմերը պատրաստակամություն են հայտնել մշակելու համագործակցության ընդլայնման նոր օրակարգ, որի շրջանակում կիրառործվեն համատեղ նոր ծրագրեր:

Հեղինակ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խորհրդարանական լուսմներ

Հանրակրթության համակարգը չի կարող փոխվել միայն օրենքի փոփոխությամբ

Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը 25.01.2022թ կազմակերպել է խորհրդարանական լուսմներ՝ նախորդ տարվա դեկտեմբերին առաջին ընթերցմամբ ընդունված «Հանրակրթության մասին» օրենքի փոփոխությունների վերաբերյալ: Լուսմներին մասնակցել են հանրակրթության ոլորտի, փորձագիտական եւ քաղաքացիական շուրջ 130 ներկայացուցիչներ:

Հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը տեղեկացրել է, որ խորհրդարանական լուսմները նպատակ ունեն ավելի առարկայական քննարկելու դպրոցում առկա խնդիրները եւ կազմակերպվել են ԱԺ ընդդիմադիր պատգամավորների առաջարկով:

Մտահոգիչ փաստեր հանրակրթության որակի մասին

Հիմնական զեկուցող, ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը իր ելույթում ներկայացրել է առաջարկվող հիմնական փոփոխությունները եւ առաջին ընթերցումից հետո նախագծում արված խմբագրումները: Ելույթի նախաբանում մինչ առաջարկվող փոփոխություններին անդրադառնալը փոխնախարարը խոսել է հանրակրթության որակի ներկա մտահոգիչ պատկերի եւ համակարգային խնդիրների մասին: Խոսքի սկզբում շնորհակալություն հայտնելով հանրակրթության ոլորտի նվիրված աշխատողներին՝ փոխնախարարը ներողություն է խնդրել նրանցից: «Դեռևս խոսքս կառուցվելու են խոսելով խնդիրների մասին, որոնք այս մարդկանց եւ խմբերի հետ առնչություն գրեթե չունեն, սակայն այդ խնդիրների պատճառով է նաեւ, որ այս նվիրյալ օղակների աշխատանքը տեսանելի չէ այն չափով ու ձևով, որին արժանի են: Սակայն միաժամանակ հասկանում են, որ ամեն անգամ խնդիրների մասին ընդհանուր խոսակցությունը իրենց գործն անող մարդկանց թողնում է երկակի զգացումներով, գուցե նեղարտությամբ: Բայց այսօր չունենք այլընտրանք, քան խոսել մեր դպրոցի խնդիրներից: Ուստի ներողություն, եթե խոսքս հնչի կտրուկ, տեղ-տեղ ցավեցնի, տեղ-տեղ վրդովմունք առաջացնի, բայց այս հարթակը եւ այս թեման կոմպրոմիս չեն ենթադրում: Եկեք խոսենք բաց: Մեզ հաճախ մեղադրում են, որ փորձում ենք փոխել դպրոցը կամ, չխուսափեմ հնչող մեղադրանքը կանխավ բարձրաձայնելուց, քանզում ենք դպրոցը: Եկեք հասկանանք՝ ո՞ր դպրոցի մասին է խոսքը: Անցնելով 12-ամյա հանրակրթության՝ մեր երեխաները եթե լավ սովորեն, ապա կկարողանան իրացնել իրենց կարողությունների 57 տոկոսը: Այն արդյունքը, որը երեխաները ստանում են 12 տարվա ընթացքում, կարող էին ստանալ 9 տարում»,-նշել է Անդրեասյանը՝ ավելացնելով, որ մեր երկրում յուրաքանչյուր 3-րդ երեխան չի կարողանում կարդալ եւ պարզ տեքստեր հասկանալ: Նախարարի տեղակալի խոսքով՝ 2003-2015 թվականներին Հայաստանում աշակերտների 24-42 տոկոսը չի հաղթահարել բնագիտության միջազգային զննահատման ստորին շեմը:

Տարեկան թափուր է մնում ուսուցչի 700 տեղ

Լուրջ խնդիր է ուսուցիչների համալրման խնդիրը: Ըստ ժամանակակից Անդրեասյանի՝ տարեկան ավելի քան ուսուցչական 700 տեղեր թափուր են մնում, չեն լրացվում նույնիսկ քաղաքային դպրոցների մանկավարժական թափուր տեղերը: Հետզհետե դժվարանում է հատկապես ՔՏՃՄ բնագավառի առարկաների ուսուցիչ գտնելը:

«Այսօր մենք Մանկավարժական համալսարանում, 1-4 կուրսերը միասին վերցրած, ունենք ընդամենը 7 ուսանող, որոնք համապատասխան ֆակուլտետում կրթություն են ստանում՝ որպես ֆիզիկայի սպազա ուսուցիչներ: Այդ ֆակուլտետ 2018-ին դիմել է 4, հաջորդ տարի՝ 3 հոգի: Քիմիայից պատկերն ավելի վատ է. 1 հոգի դիմել է 2017-ին, մեկ հոգի՝ 2018-ին, մյուս տարիներին՝ երեքական հոգի: Ընդհանուր առմամբ՝ ամեն տարի



«Հայոց լեզու» եւ «Հայ գրականություն» առարկայի ավարտական քննության նվազագույն շեմը 2017-2018 թվականներին հաղթահարել է 9-րդ դասարանի աշակերտների միայն 54,6 տոկոսը: Ցուցանիշները խոսում են հայոց լեզվի թույլ ինքնուրույն կամ առիտաբար չիմանալու մասին: Սրան գունարները սոցիալական արդարության տեսանկյունից մտահոգիչ այն իրավիճակը, ըստ որի՝ ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակն էական պայմանավորում է երեխայի կրթական արդյունքը»,- փաստել է Ժաննա Անդրեասյանը:

Ըստ նրա՝ Հայաստանը TIMSS-ին մասնակցել է նաեւ 2019 թվականին՝ գրանցելով առաջընթաց 2015թ. նկատմամբ: Մասնավորապես՝ ֆունկցիոնալ անգրագիտության պայմանական շեմից՝ 400 բալլից, ցածր հավաքած սովորողների մասնաբաժինը 30 տոկոսից կրճատվել է՝ հասնելով 20 տոկոսի, որը, միեւնույն է, մտահոգող ցուցանիշ է:

Տարեկան թափուր է մնում ուսուցչի 700 տեղ

Լուրջ խնդիր է ուսուցիչների համալրման խնդիրը: Ըստ ժամանակակից Անդրեասյանի՝ տարեկան ավելի քան ուսուցչական 700 տեղեր թափուր են մնում, չեն լրացվում նույնիսկ քաղաքային դպրոցների մանկավարժական թափուր տեղերը: Հետզհետե դժվարանում է հատկապես ՔՏՃՄ բնագավառի առարկաների ուսուցիչ գտնելը:

«Այսօր մենք Մանկավարժական համալսարանում, 1-4 կուրսերը միասին վերցրած, ունենք ընդամենը 7 ուսանող, որոնք համապատասխան ֆակուլտետում կրթություն են ստանում՝ որպես ֆիզիկայի սպազա ուսուցիչներ: Այդ ֆակուլտետ 2018-ին դիմել է 4, հաջորդ տարի՝ 3 հոգի: Քիմիայից պատկերն ավելի վատ է. 1 հոգի դիմել է 2017-ին, մեկ հոգի՝ 2018-ին, մյուս տարիներին՝ երեքական հոգի: Ընդհանուր առմամբ՝ ամեն տարի



շուրջ 21 հազար շրջանավարտներից մանկավարժ դառնալու ցանկություն է հայտնում ընդամենը 500 հոգի, մինչդեռ հանրապետության ուսուցիչների գրեթե կեսը 50 տարեկանից բարձր տարիքի է»,- նշել է Ժաննա Անդրեասյանը՝ ավելացնելով, որ առաջիկա տասնամյակում պետք է ուսուցչական կազմի էական համալրում իրականացվի:

Ուսուցչի աշխատավարձի բարձրացման մասին

Փոխնախարարի խոսքով՝ ուսուցչի մասնագիտության հանդեպ հետաքրքրությունը բարձրացնելու նպատակով պետք է փոխվի ուսուցչի դրույքաչափը, ինչը նախատեսված է առաջարկվող օրենսդրական փոփոխությամբ. «Դրույքաչափի փոփոխությունը պետք է լինի էական: Խոսքը 10, 20, 30 հազար դրամի մասին չէ: Եթե այս պահին 108 հազար 800 դրամ է դրույքաչափը, պետք է քննարկենք այն 200 հազար դրամ դարձնելու հնարավորությունը: Ուսուցիչը, անցնելով կամավոր առեստավորման համակարգով, կարող է ստանալ մինչեւ 50 տոկոս հավելավճար, որը կկիրառվի այս դրույքաչափի նկատմամբ: Ուսուցիչը նաեւ կունենա հնարավորություն ստանալու տարակարգ եւ կրկնապատկելու աշխատավարձը: Սա նշանակում է, որ օրենքի ընդունման պարագայում մենք գնալու ենք առեստավորման կարգի մեծ փոփոխությունների. հաշվարկներն արդեն արված են, որ մենք կարողանանք ուսուցչի 400 հազար դրամ աշխատավարձը դարձնել մի իրողություն, որը կարող է հասանելի լինել մեր ուսուցիչների զգալի մասին, տարեցտարի՝ նաեւ բոլորին»:

Զարգացման ծրագրերը վերածել են շինարարության ծրագրերի, որը ճիշտ չէ

«Մեզ հաճախ թվում է, թե մեր հանրակրթությունը երեւանի կենտրոնի դպրոցներն են կամ քաղաքային մեծ դպրոցները: Մեր 1400 դպրոցներից շուրջ 800-ը իրենց բնակավայրի միակ դպրոցն են, դպրոցների շուրջ 66,5 տոկոսն ունի մինչեւ երեք հարյուր սովորող, ընդ որում՝ մինչեւ 100 աշակերտ ունեցող դպրոցները կազմում են դպրոցների ընդհանուր թվի շուրջ 31,5 տոկոսը, դպրոցների եւս շուրջ 35 տոկոսը ունի 101-300 սովորող: Դպրոցական շենքերի ընդհանուր հզորությունը նախատեսված է շուրջ 650 հազար աշակերտների համար, այնինչ աշակերտների թիվը շուրջ 400 հազար է: Այդ շենքերի ծանրաբեռնվածությունը որոշ դեպքերում պահպանման տեսանկյունից անարդյունավետ է դարձնում առկա ծախսերը՝ ուղղորդելով գտնելու առավել թիրախային լուծումներ, զույրային եւ վարչատնտեսական կառավարման նոր մոդելներ: Մասնավորապես՝ դպրոցների բեռնվածությունը ցույց է տալիս, որ դրանց 26,3 տոկոսը մինչեւ 25 տոկոս բեռնվածություն ունի, դպրոցների 19,9 տոկոսն ունի 25-50 տոկոս բեռնվածություն: Նման դեպքերում հաստատությունը պետք է ընդլայնի իր նշանակությունը՝ գործելով իբրեւ համայնքային կենտրոն՝ ապահովելով բնակավայրի մշակութային, մարզական, ժամանցային միջավայրն ու ենթակառուցվածքները, ինչպես նաեւ համայնքի նախադպրոցական, լրացուցիչ եւ շարունակական կրթության, ըստ անհրաժեշտության՝ նաեւ արհեստագործական կրթության բաղադրիչները»,- նշել է բանախոսը՝ ավելացնելով, որ դպրոցների կառավարման ոլորտում ունենք գործառույթների եւ լիազորությունների անարդյունավետ բաշխվածություն: Տնօրենից պահանջվում է լինել լավ վարչատնտեսական կառավարիչ, լավ բովանդակային կառավարիչ, ուսումնական գործի լավ մասնագետ: Հավաստագրման մեխանիզմով թե գործող տնօրեններին, թե համակարգ նոր մուտք գործողներին պարտադրվում է սեփական միջոցներով անցնել վերապատրաստում, նույնիսկ եթե դրա կարիքը չկա: «Զարգացման ծրագրերը վերածել են շինարարության ծրագրերի՝ ով ավելի ենք շինարարության ծրագրերի՝ ով ավելի լավ կփոխի դպրոցի դռներն ու լուսամուտը, մի նոր համակարգի կզնի կամ կվերանորոգի ցանկապատը, համարվում է լավ տնօրեն: Դպրոցի կառավարման կղզիակա մարմինը՝ խորհուրդը, նեղացրել-հասցրել ենք մի նպատակի՝ դպրոցի տնօրենի ընտրության: Դպրոցական խորհուրդն այդպիսով դարձել է տարբեր շահերի սպասարկման խումբ՝ հինքից անհնար դարձնելով բովանդակային քննարկումը, դպրոցի զարգացման խնդիրների շուրջ շահագրգիռ խոսակցությունը»,- շեշտել է փոխնախարարը:

Փոփոխություններ՝ 4 հիմնական ուղղությամբ

Նշելով, որ «Հանրակրթության մասին» օրենքի փոփոխությունները 4 հիմնական ուղղությամբ են իրականացվում՝ հանրակրթության բովանդակություն, ուսուցիչների մասնագիտական զարգացում եւ կատարելագործում, համընդհանուր ներառականություն, կառավարման արդյունավետության բարձրացում, նախարարի տեղակալը խոսել է առաջարկվող հիմնական լուծումների մասին:

Ժաննա Անդրեասյանը նշել է, որ «Հանրակրթության մասին» օրենքի փոփոխության նպատակը հանրակրթության համակարգի փոփոխությունն է, որը սոսկ օրենքի փոփոխությունները չի կարող իրագործել: Համակարգի փոփոխությունը հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ կփոխվեն եւ կներդաշնակեցվեն բոլոր բաղադրիչները: Ըստ այդմ ինչպես բանախոսն է նշել, փոխվում են նաեւ դպրոցի ֆինանսավորման ձևեր, ուսուցչին ներկայացվող պահանջները, վերապատրաստման եւ առեստավորման պահանջները, փիլիսոփայությունն ու դրվում տնօրենին վերապահված գործառույթները:

Խորհրդարանական լուսմների մասնակիցները հարցեր են ուղղել հիմնական զեկուցողին, հանդես են եկել ելույթներով՝ հնչեցնելով կարծիքներ եւ առաջարկներ քննարկվող օրենսդրության վերաբերյալ:

«Ես գիտեմ, որ մենք համակարգում ունենք մարդիկ, որոնք համար մեր երեխաների կրթությունն ամենակարեւորն է, եւ որոնք իմ վստահության ու լավատեսության հիմքն են»,- եզրափակելիս խոսքում նշել է փոխնախարարը՝ ավելացնելով, որ լուսմների ընթացքում բարձրաձայնված բոլոր առաջարկները կքննարկվեն:

Կրթության միջազգային օրվա կապակցությամբ

«Պատմություն #5» ռեսուրսատուփի շնորհանդեսը

Կրթության միջազգային օրը Հայաստանի ամերիկյան համալսարանում տեղի է ունեցել «Պատմություն #5. բացակա պատմության դասից, ներկա անցյալում» ռեսուրսատուփի շնորհանդեսը:

Ռեսուրսատուփը մշակել են ՅՈՒՆԵՍԿ-ը եւ «Պարադիզմ» կրթական հիմնադրամը:

Միջոցառմանը մասնակցել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, ՅՈՒՆԵՍԿ-ի, «Պարադիզմ» կրթական հիմնադրամի ներկայացուցիչներ, հյուրեր: Միջոցառմանն առջանց միանալու հնարավորություն են ունեցել հանրապետության հարյուրից ավելի ուսուցիչներ:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը, շնորհավորելով կրթության միջազգային օրվա կապակցությամբ, նշել է, որ պետք է համատեղ ջանքերով բարելավել եւ եպես բարձրացնել կրթության որակը: Նրա խոսքով՝ վերջին շրջանի իրողությունները են համավարակը նոր սրությամբ են դրել յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի հարցը, որը պետք է իրացվի որակյալ կրթության հասանելիությամբ:

«Որակյալ կրթության հասանելիության խնդիրներից մեկը կրթության պատշաճ ռեսուրսների առկայությունն է, եւ դրան է ուղղված այսօրվա նախաձեռնությունը՝ լրացնել ուսուցիչների գործիքակազմը, որը թույլ կտա եւ պետք է հեշտացնել պատմության ուսուցանման գործընթացը: Այս իմաստով այն առանցքային առարկա է, որովհետեւ պատմությունն առաջին հերթին գիտելիք է եւ կարողություն վերլուծելու սեփական անցյալը, ներկան եւ պատկերացնելու ապագան: Հատկապես նոր չափորոշիչ պարագայում մենք պատմության ուսուցանման գործիքակազմն է պետք ընդլայնելու, այն առավել ճկուն դարձնելու, մեր կարիքներին համապատասխանեցնելու եւ ճանաչողության ու ինքնաձեռնաչողության իրական գործիք դարձնելու հնարավորություն ունենք»,- նշել է Ժաննա Անդրեասյանը:

Նրա խոսքով՝ «Պարադիզմ» կրթական հիմնադրամի մշակած պատմության ուսուցման ձեռնարկը՝ «Գիրք պատմության ուսուցման. ինչո՞ւ, ինչպե՞ս» գիրքը, որը երաշխավորված է ԿԳՄՍ-ի կողմից, եւ ՅՈՒՆԵՍԿ-ի հետ համատեղ ներկայացված «Պատմություն#5» ռեսուրսատուփը հնարավորություն են տալիս չափորոշչով դրված խնդիրը մեկ քայլ առաջ տանելու:

«Կարելի է ընտրված մեթոդը. այն մշակվել է նախագծային ուսուցման հիմքի վրա, որը նոր չափորոշչով համարվում է դպրոցի պարտադիր բաղադրիչ: Կարելի է ընտրված թեմաները՝ իբրեւ նյութի ներկայացման առանցք, եւ սա նույնպես նոր չափորոշիչ շեշտադրումներից է: Խոսքը գեներային հավասարության, տղամարդկանց եւ կանանց ներկայացվածության համաչափության մասին է: Ուրախ եմ, որ ներկայացված նյութերը հնարավորություն են տալիս անդրադառնալու մեր հասարակության համար խիստ զգայուն, սակայն շատ կարեւոր թեմայի: Հուսով եմ, որ կգտնենք ճիշտ մեթոդաբանությունն ու ձեւը՝ մեր երեխաներին առեւտելու մեր պատմությանը»,- նշել է Ժաննա Անդրեասյանը՝ ընդգծելով, որ ԿԳՄՍ նախարարությունը պատրաստակամ է աջակցելու բոլոր կարեւոր նախաձեռնություններին:

ՅՈՒՆԵՍԿ-ի ներկայացուցիչ Քրիսթինե Վայգանդը նշել է, որ համաձայն Համաշխարհային բանկի կողմից 2016 թվականին իրականացված հետազոտության «Հայոց պատմության» դասագրքերում նյութերի 80 տոկոսը տղամարդկանց մասին է: Նա կարելի է, որ կանայք եւս ներգրավված լինեն այդ նյութերում, որպեսզի երեխաները տեղեկացված լինեն կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների մասին: Քրիսթինե Վայգանդը հույս է հայտնել, որ ներկայացված ռեսուրսային փաթեթը, որտեղ ներառված են էթնիկական, պատմական, ժողովրդագրական նյութեր, կօգնի ուսուցիչներին

լրացնելու ուսուցման մեթոդաբանությունը:

«Պարադիզմ» կրթական հիմնադրամի ներկայացուցիչները ներկայացրել են եւ փորձարկել գործիքը նշելով, որ «Պատմություն #5» ռեսուրսատուփը պատմության ուսուցման նորարար միջոց է ոչ միայն Հայաստանում, այլեւ շատ զարգացած երկրներում:


Ռեսուրսատուփը պարունակում է հինգ թեմայի վերաբերյալ 240 աղբյուրային քարտ, հինգ էլեկտրոնային դասապլան, որոնք թույլ կտան խաղային ուսուցման որոշ սկզբունքների կիրառմամբ վերլուծել հայոց պատմության մի շարք դրվագներ:

«Պատմություն #5»-ի 1000 օրինակ կնվիրաբերվի ՀՀ պետական հանրակրթական դպրոցներին:

«Պատմություն #5» ռեսուրսատուփը հայոց պատմության մի շարք թեմաներ դիտարկում է կանանց եւ տղամարդկանց առօրյայի, դերերի, դրանք սահմանող քաղաքականության ու հարաբերությունների, սովորույթների ու ձգտումների տեսանկյունից: Այն պարունակում է աղբյուրային տեղեկության պատրաստի քարտեր եւ դրանց կիրառման ուղեցույց՝ ակտիվ պատմական ուսումնառության համար:

«Պատմություն #5» ուսուցչի էլեկտրոնային ուղեցույցում գետեղված են հինգ թեմաներ՝ «Կանանց ազատագրության հարցը խորհրդային վաղ շրջանում», «Ամուսինների նախահարսանեկան եւ ետհարսանեկան ծիսական վարքը՝ ավանդական ու արդի հայ հասարակություններում», «Հայ կանանց հասարակական գործունեությունը 19-րդ դարում եւ 20-րդ դարի սկզբին Օսմանյան եւ Ռուսական կայսրություններում ու Պարսկաստանում (Իրանում)», «19-րդ դարի Օսմանյան կայսրության հայկական վիլայեթների հայերի պանդխտությունը» եւ «Հայ կնոջ վերաբերյալ հանրային քննարկումները 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին Օսմանյան ու Ռուսական կայսրություններում» վերտառություններով:

Ռուբեն ԱՐՈՒՏՅԱՆ



ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը խորը վշտով տեղեկացնում է, որ 75 տարեկանում կյանքից հեռացել է Հայաստանի վաստակավոր նկարիչ Ռուբեն Արուտյանը:

Ռ. Արուտյանը ծնվել է 1947 թվականին, Երեւանում: 1970 թվականին ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետը: 1986-90 թվականներին եղել է Գեղարվեստի ֆոնդի կերպարվեստի կոմբինատի գլխավոր նկարիչը: 1990-92 թվականներին՝ Երեւանի գլխավոր նկարիչը:

Մասնակցել է հանրապետական եւ միջազգային բազմաթիվ ցուցահանդեսների:

1974 թվականից եղել է Հայաստանի ճարտարապետների միության, 1976 թվականից՝ Նկարիչների միության անդամ: 1995 թվականին ընտրվել է Դիզայնների միջազգային միության, 2011 թվականին՝ Աշխարհի հայ նկարիչների միության անդամ:

Ստեղծագործական արդյունավետ գործունեության ընթացքում ունեցել է բազմաթիվ ցուցադրություններ. անհատական ցուցահանդեսներ Երեւանում (1994 թ.), Մոսկվայում, ԱՄՆ-ում, Կանադայում եւ Երեւանում (1997 թ.), Ֆրանսիայում (2001 թ.) եւ այլն: 2004 թվականին հեղինակել է Հայաստանի պաշտպանության նախարարության գինանշանը, 2006 թվականին՝ Հոլոքոստի եւ Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակներին նվիրված հուշաքարը, որը տեղադրված է Երեւանի Օղակաձեւ այգում: Արժանացել է մի շարք պարգևների, մրցանակների, խրախուսանքների. 2012 թվականին արժանացել է Հայաստանի վաստակավոր նկարչի կոչման:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն իր վշտակցությունն է հայտնում Ռուբեն Արուտյանի ընտանիքի անդամներին, մերձավորներին, ընկերներին եւ նրա արվեստի երկրպագուներին:

Հաստատվել են առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլի անցկացման վայրերը եւ մասնակիցների թիվը

ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել են ՀՀ դպրոցականների 2021-2022 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլի անցկացման վայրերը եւ մասնակիցների թիվը:

Ըստ այդմ «Մաթեմատիկա» եւ «Ֆիզիկա» առարկաներից հանրապետական փուլին կմասնակցի 200-320, «Քիմիա», «Կենսաբանություն եւ Աշխարհագրություն» առարկաներից՝ 80-100, «Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Պատմություն», «Ռուսաց լեզու» եւ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկաներից՝ 119, «Անգլերեն», «Ֆրանսերեն» եւ «Գերմաներեն» առարկաներից՝ 99, «Ինֆորմատիկա» եւ «Աստղագիտություն» առարկաներից՝ 25-70, իսկ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից՝ 84 դպրոցական:

«Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Աստղագիտություն», «Աշխարհագրություն», «Հայոց լեզու», «Հայ գրականություն» եւ «Ռուսաց լեզու» առարկաների օլիմպիադաները կանցկացվեն ՀՀ ԿԳՄՍ Երեւանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցում, «Կենսաբանություն» առարկայինը՝ Երեւանի թիվ 118 ավագ դպրոցում եւ «Թունո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում, «Քիմիա», «Պատմություն» եւ «Ինֆորմատիկա» առարկաներինը՝ Երեւանի պետական համալսարանում, «Անգլերեն», «Ֆրանսերեն» եւ «Գերմաներեն» առարկաներինը՝ Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում, «Հայոց եկեղեցու պատմությունը»՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Եօրնեկեան հանրակրթական դպրոցում, իսկ «Նախնական զինվորական պատրաստությունը»՝ Նուբարաշենի Ա. Մանուկյանի անվան ռազմամասնագիտացված դպրոցում:

Հրամանով հաստատվել են նաեւ մասնակիցների գիշերակացի վայրերը:

Հեղինակ՝ ՀՈՎՀՆՆԻՍՅԱՆ

Ներառական

Դասընթացների՝ երաժշտական եւ արվեստի դպրոցներում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով հաստատվել է երաժշտական եւ արվեստի դպրոցներում ներառականության ապահովմանն ուղղված դասընթացների կազմակերպման ծրագիրը, որն իրականացվում է առաջին անգամ:

Երաժշտական եւ արվեստի դպրոցների ոչ բոլոր ուսուցիչներն են պատրաստ լիարժեք աշխատելու կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ, քանի որ չունեն համապատասխան գիտելիքներ եւ հմտություններ: Ծրագիրը կոչված է լրացնելու այդ բացը:

Ծրագրի նպատակն այն է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները

չմեկուսացվեն կրթական համակարգից եւ չզրկվեն գեղարվեստական որակյալ կրթություն ստանալու իրավունքից: Ծրագրի ընթացքում կապահովվեն անհատական աջակցությանն ուղղված արդյունավետ միջոցներ համապատասխան միջավայրում, ինչն էլ առավելագույնս կնպաստի նրանց ուսումնական ու սոցիալական զարգացմանը:

Ծրագրի արդյունքում ակնկալվում են մանկավարժների ներառական դասավանդման հմտությունների զարգացման ապահովում, գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկվածության աճ, ինչպես նաեւ հաշման-

դամություն ունեցող երեխաների նկատմամբ կարծրատիպերի վերացում եւ նրանց կրթության իրավունքի ապահովում:

Ծրագիրը հունվար-մայիս եւ սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին կանցկացվի Երեւանում. այն կիրականացնի «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոնը»՝ 26 ուսումնական հաստատությունում, եւ կներառվի շուրջ 500 մասնակից (մանկավարժ): Նախագծում կընդգրկվեն ներառական ոլորտի առաջատար մասնագետներ, որոնց միջոցով տարվա ընթացքում կիրականացվեն դասընթացներ:

Ծրագիրը կներառի գործնական եւ տեսական պարապմունքներ:

Աշխարհի հետ

Արհեստական բանականության հեռանկարները Հայաստանում

Երեւանում տեղի է ունեցել «Արհեստական բանականության հեռանկարները Հայաստանում. կրթությունն առանցքում» թեմայով համաժողովը, որը կազմակերպել էր «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամը: Միջոցառման նպատակը կրթության ոլորտում արհեստական բանականության հեռանկարների, նոր գաղափարների փոխանակման հարթակում հետաքրքիր եւ բազմաբովանդակ քննարկումների ծավալումն էր, որի արդյունքում ակնկալվում է համատեղել պետական մարմինների, ՏՏ ընկերությունների, ինչպես նաեւ ակադեմիական շրջանակի ներուժը, ձեւավորել համատեղ օրակարգ եւ համագործակցության կայուն շրջանակ:



Վահագն Խաչատրյանը կարեւորել է ժամանակակից աշխարհում արհեստական բանականության դերը՝ ընդգծելով, որ ցանկացած առաջընթաց իր հետ բերում է նաեւ որոշակի վտանգներ եւ ռիսկեր, որոնք անվտանգության առումով անհրաժեշտ է դարձնել ոչ խոցելի եւ կառավարելի: Նա անդրադարձել է նաեւ Հայաստանի թվայնացման ճանապարհին կիբերանվտանգության մարտահրավերներին:

Ռին, նշել է, որ պետության տնտեսական եւ սոցիալական զարգացման նպատակով կրթության ռազմավարական ուղղություններից են սահմանվել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության լայնածավալ ընդգրկվածության ապահովումն ու կրթական ծրագրերի արդիականացումը՝ դրանք համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին եւ միջազգայնորեն ընդունված չափանիշներին: Այդ համատեքստում նախարարը մասնավորապես կարեւորել է մաթեմատիկայի, բնական գիտությունների, ճարտարագիտության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցումը: «Ուսումնական հաստատությունները սովորողներին պետք է այնպես պատրաստեն, որ նրանք դառնան արագ զարգացող հասարակությանը պատրաստ անհատներ, ու զինեն այնպիսի կարողունակություններով ու հմտություններով, որոնք հնարավորություն կտան ստեղծագործել եւ կատարելագործել մասնագիտական գիտելիքները տեխնիկային ու արհեստական բանականությանը համընթաց, ինչպես նաեւ հաջողության հասնել թվային աշխարհում: Այդ հաջողության բանալին թվային գրագիտությունն է, ինչն ուսանողներին թույլ կտա հարմարվել դասավանդման նոր մոտեցումներին եւ ապահովել պետության զարգացումը»,- նշել է նախարարը:

Վահրամ Դումանյանը տեղեկացրել է, որ հաշվի առնելով ոլորտի զբերակայությունը՝ ՀՀ կառավարությունը 2021/2022 ուստարում պետության կողմից ուսանողական նպաստների ձեւով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) հաստատել է «Տվյալների մշակումը ֆիզիկայում եւ արհեստական բանականություն» կրթական ծրագրով ընդունելության 8 տեղ եւ «Արհեստական բանականությանը համակարգը» կրթական ծրագրով ընդունելության 5 տեղ:

Մասնակիցներին ողջունել է նաեւ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի «Քաղաքական երկխոսություն. Հարավային Կովկասե տարածաշրջանային կենտրոնի տնօրեն Թոմաս Շրապելը՝ ընդգծելով, որ արհեստական բանականությունը կարող է դառնալ ՀՀ տնտեսության ապագայի մաս եւ ընձեռել զարգացման նոր հնարավորություններ:

«Արհեստական բանականության ներկան եւ ապագան Հայաստանում» թեմայով քննարկմանը Հայաստանի հայտնի ՏՏ ընկերությունների, գիտակրթական եւ նորարարական կենտրոնների ներկայացուցիչները հանդես են եկել որպես բանախոսներ: Այնուհետեւ կայացել են պանելային քննարկումները: «Արհեստական բանականության ոլորտում կրթության հզորացումը. նորարարական կրթական ծրագրեր եւ մոդելներ «Ներկա կրթություն-ապագա աշխատուժ» համատեքստում» թեմայով պանելային քննարկմանը մասնակցել է նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը:

Տարողունակ կրթական ծրագրեր

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանն ընդունել է ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Անն Լույոյին:

առիթմ է քննարկելու համագործակցության ընդլայնման ներուժը եւ ուղենշելու զարգացման հեռանկարները:

սերենի ուսուցման փորձն այլ հաստատություններում տարածելու հնարավորությունը:

նաեւ Հայաստանի նախնական եւ միջին մասնագիտական հաստատությունների կրթական ծրագրերի զարգացման համագործակցությանը: Ողջունելով այս ուղղությամբ արդեն իսկ կատարված առանձին քայլերը՝ Արթուր Մարտիրոսյանը շեշտել է նմանօրինակ նախաձեռնությունների կյանքի կոչումը մի փուլում, երբ կրթություն-աշխատաշուկա կապի զարգացման համատեքստում գերակա է ՄԿՈՒ հաստատություններում նոր մասնագիտությունների ներդրումը, կրթական ծրագրերի վերափոխումը, մասնավորապես՝ դուալ կամ աշխատանքի վրա հիմնված կրթական ծրագրերի ներդրումը՝ կարեւորելով ֆրանսիական փորձն ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ մասնագիտական կրթության այլ ոլորտներում:

նաեւ արտերկրյան հայկական պատմաշակութային ժառանգության պահպանության կարեւոր նմուշ հանդիսացող Դաքքայի Սուրբ Հարություն հայկական եկեղեցու պահպանման, վերականգնման եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու գործընթացը: Ողջունելով Բանգլադեշի կառավարության այդ նախաձեռնությունը՝ մշակութային ժառանգության պահպանման պետությունների համընթաց շրջանակում ԿԳՄՍ նախարարի տեղակալը պատրաստակամություն է հայտնել փորձագիտական աջակցություն ցուցաբերելու ՅՈՒՆԵՍԿՕ-ին համապատասխան հայտի ներկայացման գործընթացում եւ դեսպանի ուղարկությունն է հրավիրել 2020 թվականի պատերազմային հետևանքով Ադրբեջանի վերահսկողության ներքո անցած տարածքներում հայկական պատմաշակութային ժառանգության պահպանության խնդրին: Նա հույս է հայտնել, որ գործընկեր երկրների կողմից իրավիճակի արձանագրումների արդյունքում Ադրբեջանը զերծ կմնա իր հսկողության ներքո հայտնված հազարավոր հայկական պատմաշակութային հուշարձանները ոչնչացնելուց եւ դրանց ծագումն աղավաղելուց:

Փոխգործակցության նոր հնարավորություններ

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանն ընդունել է ՀՀ-ում Բանգլադեշի Ժողովրդական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Գուսալ Ազամ Մարքերի գլխավորած պատվիրակությանը: Կողմերը քննարկել են կրթության եւ մշակույթի ոլորտներում համագործակցության ներկա իրավիճակն ու հեռանկարները:



ման համատեքստում Արթուր Մարտիրոսյանը կարեւորել է օտարերկրյա ուսանողների ներգրավման, պրոֆեսորադասախոսական կազմի եւ ուսանողների շարժունության ապահովման եւ միջբուհական համագործակցության զարգացման բաղադրիչները: Կողմերը ներկայացրել են

իրենց երկրների բուհերում օտարերկրյա ուսանողների համար նախատեսված իրավակարգավորումները, մասնագիտությունների առաջնահերթությունները եւ այլ խնդիրների վերաբերող հարցեր: Անդրադարձ է եղել նաեւ բարձրագույն կրթության որակի ապահովման եւ միջբուհական համագործակցության զարգացման հնարավորություններին:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաեւ արտերկրյան հայկական մշակութային ժառանգության կարեւոր նմուշ հանդիսացող Դաքքայի Սուրբ Հարություն հայկական եկեղեցու պահպանման, վերականգնման եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու գործընթացը: Ողջունելով Բանգլադեշի կառավարության այդ նախաձեռնությունը՝ մշակութային ժառանգության պահպանման պետությունների համընթաց շրջանակում ԿԳՄՍ նախարարի տեղակալը պատրաստակամություն է հայտնել փորձագիտական աջակցություն ցուցաբերելու ՅՈՒՆԵՍԿՕ-ին համապատասխան հայտի ներկայացման գործընթացում եւ դեսպանի ուղարկությունն է հրավիրել 2020 թվականի պատերազմային հետևանքով Ադրբեջանի վերահսկողության ներքո անցած տարածքներում հայկական պատմաշակութային ժառանգության պահպանության խնդրին: Նա հույս է հայտնել, որ գործընկեր երկրների կողմից իրավիճակի արձանագրումների արդյունքում Ադրբեջանը զերծ կմնա իր հսկողության ներքո հայտնված հազարավոր հայկական պատմաշակութային հուշարձանները ոչնչացնելուց եւ դրանց ծագումն աղավաղելուց:

Հանդիպմանն անդրադարձ է եղել երկու երկրների միջեւ մշակույթի ոլորտում համագործակցության համաձայնագրի ստորագրման հնարավորությանը: Կողմերը քննարկել են նաեւ կրթության եւ մշակույթի ոլորտներում երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հեղինակ՝ ՅՈՒՆԵՍԿՕ

Խորհրդարան

Արցախի հետ

Քննարկվել են ՄԿՈՒ ոլորտի օրենսդրական բարեփոխումները

ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը, ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ, ԳՄՀԸ-ի (GIZ) օժանդակությամբ, նախաձեռնել էր կլոր սեղան-քննարկում «Մասնագիտական կրթության ոլորտում օրենսդրական բարեփոխումները աշխատանքի վրա հիմնված ուսուցման մոդելներն արդյունավետ գործարկելու և որակյալ մասնագետներ ապահովելու համատեքստում» թեմայով: Հանդիպմանը մասնակցել են ԱԺ համապատասխան կարգավորումներ, ԿԳՄՍ նախարարության և շահագրգիռ այլ գերատեսչությունների, ոլորտային կառույցների ներկայացուցիչներ, ՄԿՈՒ հաստատությունների տնօրեններ:

Ճանաչողական, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը, ողջունելով քննարկման մասնակիցներին, նշել է, որ աշխատանքային հսկայական հատվածը պետք է ապահովի ՄԿՈՒ ոլորտը, եւ այդ առումով այն շատ կարեւոր է: «Ներկայումս հիմնովին վերանայվում է այդ ոլորտի օրենսդրությունը, եւ այս թիրախային քննարկումը կազմակերպել ենք, որպեսզի հասկանանք, թե ինչ հիմնական խնդիրներ կան, որոնք խոչընդոտում են ՄԿՈՒ հաստատություններին կայանալու և տնտեսապես անկախ ու ինքնաբավ լինելու, շահույթը, ըստ օրենքի եւ կանոնադրության, ծառայեցնելու կրթության բովանդակությանը եւ պայմանների բարելավմանը»,- նշել է Սիսակ Գաբրիելյանը քննարկման մասնակիցներին հորդորելով անկաշկանդ քննարկել բոլոր հարցերը եւ գտնել խելամիտ լուծումներ:

Կարգավորումները կարգավորումները պետք է մշակվեն արդեն իսկ կուտակված փորձի հիման վրա: Ավելի հաճախ մենք ունենում ենք հակառակ պատկերը, երբ օրենսդրական փոփոխություններ են իրականացվում, հետո դրանք կյանքի են կոչվում: Սա մեզ լավատեսություն է ներշնչում, որ մշակված մեխանիզմները կլինեն կիրառական եւ կբարձրացնեն ՄԿՈՒ ոլորտի կրթության որակը»,- նշել է բանախոսը:

Սիսակ Գաբրիելյանը նախաձեռնությունը ընդգծելով, որ ՄԿՈՒ ոլորտում որակական ճեղքում ապահովելու և լավագույն լուծումներ գտնելու համար կարեւոր է տարբեր կառույցների ջանքերի համադրումը: Նրա խոսքով բացի վաղուց հասունացած փոփոխությունների շեշտադրումներից, անհրաժեշտ է խոսել նաեւ այն գործնական քայլերից, որոնք պետք է ոյուրին դարձնեն աշխատանքի վրա հիմնված ուսուցման մոդելի (ԱՅՈՒ) լայնածավալ կիրառությունը բոլոր ուսուցողական կառույցներում: «Այս առումով համապատասխան գործընկերության շրջանակում 2017 թվականից ունենք կուտակված լավ փորձ իրականացված բազում փորձնական ծրագրերի հիման վրա: Սա այն տարբերակն է, որ ԱՅՈՒ օրենսդրական կարգավորումները պետք է մշակվեն արդեն իսկ կուտակված փորձի հիման վրա: Ավելի հաճախ մենք ունենում ենք հակառակ պատկերը, երբ օրենսդրական փոփոխություններ են իրականացվում, հետո դրանք կյանքի են կոչվում: Սա մեզ լավատեսություն է ներշնչում, որ մշակված մեխանիզմները կլինեն կիրառական եւ կբարձրացնեն ՄԿՈՒ ոլորտի կրթության որակը»,- նշել է բանախոսը:

Ճանաչողական, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը, ողջունելով քննարկման մասնակիցներին, նշել է, որ աշխատանքային հսկայական հատվածը պետք է ապահովի ՄԿՈՒ ոլորտը, եւ այդ առումով այն շատ կարեւոր է: «Ներկայումս հիմնովին վերանայվում է այդ ոլորտի օրենսդրությունը, եւ այս թիրախային քննարկումը կազմակերպել ենք, որպեսզի հասկանանք, թե ինչ հիմնական խնդիրներ կան, որոնք խոչընդոտում են ՄԿՈՒ հաստատություններին կայանալու և տնտեսապես անկախ ու ինքնաբավ լինելու, շահույթը, ըստ օրենքի եւ կանոնադրության, ծառայեցնելու կրթության բովանդակությանը եւ պայմանների բարելավմանը»,- նշել է Սիսակ Գաբրիելյանը քննարկման մասնակիցներին հորդորելով անկաշկանդ քննարկել բոլոր հարցերը եւ գտնել խելամիտ լուծումներ:

Քննարկումը ծավալվել է երեք հիմնական թեմաների շուրջ՝ արհեստագործական ուսումնարանների եւ քոլեջների ձեռնարկատիրական գործունեության թուլատրելի տեսակների կազմակերպման հնարավորությունները, խոչընդոտները, հարկման հիմնախնդիրները, առկա կարգավորումների բարելավման տարբերակները, վերոնշյալ գործունեության կազմակերպման հետ կապված ՄԿՈՒ հաստատություններին մտահոգող այլ հարցադրումները, ինչպես նաեւ ուսումնական աշխատանքի իրավական կարգավորման հիմնախնդիրները:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը եւս ուղջունել է համատեղ նախաձեռնությունը ընդգծելով, որ ՄԿՈՒ ոլորտում որակական ճեղքում ապահովելու և լավագույն լուծումներ գտնելու համար կարեւոր է տարբեր կառույցների ջանքերի համադրումը: Նրա խոսքով բացի վաղուց հասունացած փոփոխությունների շեշտադրումներից, անհրաժեշտ է խոսել նաեւ այն գործնական քայլերից, որոնք պետք է ոյուրին դարձնեն աշխատանքի վրա հիմնված ուսուցման մոդելի (ԱՅՈՒ) լայնածավալ կիրառությունը բոլոր ուսուցողական կառույցներում: «Այս առումով համապատասխան գործընկերության շրջանակում 2017 թվականից ունենք կուտակված լավ փորձ իրականացված բազում փորձնական ծրագրերի հիման վրա: Սա այն տարբերակն է, որ ԱՅՈՒ օրենսդրական կարգավորումները պետք է մշակվեն արդեն իսկ կուտակված փորձի հիման վրա: Ավելի հաճախ մենք ունենում ենք հակառակ պատկերը, երբ օրենսդրական փոփոխություններ են իրականացվում, հետո դրանք կյանքի են կոչվում: Սա մեզ լավատեսություն է ներշնչում, որ մշակված մեխանիզմները կլինեն կիրառական եւ կբարձրացնեն ՄԿՈՒ ոլորտի կրթության որակը»,- նշել է բանախոսը:

Քննարկումը ծավալվել է երեք հիմնական թեմաների շուրջ՝ արհեստագործական ուսումնարանների եւ քոլեջների ձեռնարկատիրական գործունեության թուլատրելի տեսակների կազմակերպման հնարավորությունները, խոչընդոտները, հարկման հիմնախնդիրները, առկա կարգավորումների բարելավման տարբերակները, վերոնշյալ գործունեության կազմակերպման հետ կապված ՄԿՈՒ հաստատություններին մտահոգող այլ հարցադրումները, ինչպես նաեւ ուսումնական աշխատանքի իրավական կարգավորման հիմնախնդիրները:

Քննարկումը ծավալվել է երեք հիմնական թեմաների շուրջ՝ արհեստագործական ուսումնարանների եւ քոլեջների ձեռնարկատիրական գործունեության թուլատրելի տեսակների կազմակերպման հնարավորությունները, խոչընդոտները, հարկման հիմնախնդիրները, առկա կարգավորումների բարելավման տարբերակները, վերոնշյալ գործունեության կազմակերպման հետ կապված ՄԿՈՒ հաստատություններին մտահոգող այլ հարցադրումները, ինչպես նաեւ ուսումնական աշխատանքի իրավական կարգավորման հիմնախնդիրները:

Գիտական համագործակցություն



Օրերս ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայում կայացած հանդիպմանը ներկա էին ակադեմիայի նախագահ Աշոտ Սաղյանը, Արցախի Հանրապետության ԿՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը, ակադեմիայի 16 ինստիտուտների տնօրենները, ոլորտի այլ ներկայացուցիչներ: Հանդիպման նպատակն էր ընդլայնել գիտական համագործակցությունը ակադեմիայի ինստիտուտների, Արցախի գիտական կենտրոնի, Արցախի պետական համալսարանի եւ գիտական այլ կառույցների միջև: Ի մասնավորի՝ կողմերը քննարկել են Արցախում գիտության զարգացման, նյութատեխնիկական բազայի համալրման եւ գիտական ծրագրերի վերաբերյալ մի շարք հարցեր:

Նախարար Լ.Ղարախանյանի տեղեկացմամբ՝ այս տարի համագործակցությունն ունենալու է զարգացման նոր փուլ՝ տարբեր ծրագրերի իրականացման կոնկրետ մեխանիզմներով: Ակադեմիայի աջակցությամբ արդեն իսկ լաբորատորիաներ են ձեռնարկվել Արցախի գիտական կենտրոնում: Համագործակցության ակտիվությունն ապահովելու նպատակով ԱՀ գիտական կենտրոնն ունենալու է ակադեմիայի ներկայացուցիչ: Նախատեսվում է առաջիկայում սկսել «Նարինե պլյուս» կաթնաթթվային մթերքի արտադրությունը. արտադրամասը համալրվել է ակադեմիայի տրամադրած սարքավորումներով:

44-օրյա պատերազմից հետո թշնամին մի առանձին մոլուցքով է ջանում ջնջել Արցախի հայկական եւ քրիստոնեական ներկայությունը՝ աղվանական արհեստածին թեզեր առաջ մղելով: Այդ ամենին ի հակակշիռ՝ անհարժեշտ է համակարգված աշխատանք: Ակադեմիայի արելազգիտության եւ պատմության ինստիտուտների հետ մայիս ամսին նախատեսվում է կազմակերպել գիտաժողով՝ «Աղվանից եկեղեցու էթնիկ պատկանելության հիմնախնդիրները» խորագրով:

Ակադեմիայի աջակցությամբ ընթացիկ տարում նախատեսված է Արցախում իրականացնել խմելու ջրի որակի հետազոտությունը: Ակադեմիայի սփյուռքի բաժնի օգնությամբ՝ աշխարհի գիտական միտքը դասախոսությունների միջոցով կհասնի Արցախ: Աշխարհահռչակ գիտնականները արցախյան լսարանի համար հանդես կգան «Հմտություններ Արցախի համար» ծրագրի շրջանակում:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Բ. Ստեփանակերտ, մեր սեփական թղթակից

Ամփոփիչ մշտադիտարկում

Ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնում

Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում ստեղծվում է միջազգային չափանիշներին համապատասխան «Ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոն», որը կարող է դառնալ հիմնարար գիտության զարգացման գերազանցության հարթակ եւ մրցունակ եվրոպական մասնաճյուղի կազմակերպության լաբորատորիաների հետ:



ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը եւ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի ներկայացուցիչներն աշխատանքային այց են կատարել Երեւանի պետական բժշկական համալսարանի Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնարար մի դրամաշնորհային ընթացիկ ծրագրի ամփոփիչ մշտադիտարկման նպատակով: Այցի ընթացքում աշխատանքային խմբի անդամները դրամաշնորհային ծրագրի անձնակազմի հետ քննարկել են ծրագրով սահմանված արդյունքները եւ դրանց դրսևորումը մոնիտորինգային պլանով ձեւակերպված ցուցիչների մակարդակում:

Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում ստեղծվում է միջազգային չափանիշներին համապատասխան «Ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոն», որը կարող է դառնալ հիմնարար գիտության զարգացման գերազանցության հարթակ եւ մրցունակ եվրոպական մասնաճյուղի կազմակերպության լաբորատորիաների հետ:

Կենտրոնի հնարավորություններն ուսումնական գործընթացում լավագույնս կիրառելու նպատակով իրականացվել է նաեւ համապատասխան կրթական բովանդակություն ստեղծում: Դրամաշնորհային ծրագրի համակարգողի հավաստմամբ մի շարք քայլեր են ձեռնարկվել նաեւ ԵՊԲՀ-ի կրթական գործընթացի բովանդակության արդիականացման ուղղությամբ: Մշակվել, կազմվել եւ տպագրվել են երկվեզու ուսումնական ձեռնարկներ, ոլոր-

տում աշխատող մասնագետների համար կարողությունների զարգացման ուղղությամբ վերապատրաստման ուսումնամեթոդական ձեռնարկը, ինչպես նաեւ կենտրոնի մասին տեղեկատվական ձեռնարկը: Այս փուլում ամփոփվել են նաեւ ուսումնամեթոդական ծրագրերով փորձնական ծրագրերի իրականացման աշխատանքները:

Կոնստանտին Ենկոյանի խոսքով՝ կենտրոնի նյութատեխնիկական բազան կարող է հարթակ ծառայել այլ բուհերի եւ գիտահետազոտական կենտրոնների ուսանողների եւ գիտնականների աշխատանքների իրականացման համար, ինչը կնպաստի ոչ միայն ԵՊԲՀ-ի, այլ նաեւ ՀՀ գիտության որակի բարձրացմանը: Նա վստահեցրել է, որ կենտրոնի ստեղծումը թույլ կտա ամրապնդել համագործակցությունը միջազգային առաջատար գիտական կենտրոնների հետ, ձեռք բերել նոր գործընկերներ՝ դրանով բարձրացնելով գիտության որակը եւ արդյունավետությունը ՀՀ-ում:

Հեղինակ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Փոճիր մտապահել

սկզբը՝ նախորդ համարում

126) Անեկոտ

«Վախճանվեց նաև Պոլոզ Մուկուչը, եվ Բոչի թաղը սզաց մեծ ցավով, Այդ հին գյումրեցու շիրիմի վրա եկավ քար քաշեց»

բանաստեղծ Ավոն»:

Խաչիկ Դաշտենց

(Պոլոզ Մուկուչը Ավետիք Իսահակյանի դասընկերն էր):



Անեկոտը ֆուլկլորային ժանր է, կարճ գվարճալի պատմություն, որ սովորաբար բանավոր խոսքով է փոխանցվում մեկից մյուսին: Նրան բնորոշ է անսպասելի իմաստային լուծումը, որը եւ առաջ է բերում ծիծաղ: Դա կարող է բառախաղ լինել կամ զուգորդումներ առաջացնել ինչ-որ բաների հետ, որ կպահանջեն լրացուցիչ գիտելիքներ՝ հասարակական, գրական, պատմական, աշխարհագրական, քաղաքական դեպքերի ու դեմքերի հետ: Մեծամասամբ անեկոտների հեղինակներն անհայտ են: Անեկոտը, երգիծելով իրականությանն առնչվող կամ աղերսվող մի բան, պետք է գեղագիտական բավարարվածություն պատճառի: Դա ժողովրդական ստեղծագործության մի ձև է, որի դրսևորումները տարբեր խավերի մոտ տարբեր են, այդ պատճառով էլ՝ նրանք բնորոշող: Օրինակ՝ վանեցիների, գյումրեցիների, քյավառցիների, ապարանցիների անեկոտները: Դա կարող է լինել նաև հետաքրքրաշարժ պատմություն որեւէ հայտնի մարդու մասին, որ ամենեւին էլ նպատակ չունի նրա վրա ծիծաղ հարուցելու:

Լավ անեկոտն իր ոսկե կանոնն ունի: «Սրամիտ լինելը քիչ է: Պետք է նաև լինել բավականաչափ սրամիտ՝ չափից ավելի սրամիտ չլինելու համար»- սահմանում է Անդրե Մորուան:

Առաջին անեկոտների ծագման ժամանակի մասին խոսելը բարդ է, բայց մեզ դրանք հասել են շատ հեռավոր ժամանակներից:

Օրինակ՝ շումերական մի ասույթ, որ կավե սալիկների վրա փորագրված լինելով՝ մեզ է հասել մ.թ.ա. 1900-1600 թվականներից:

«Անհիշելի ժամանակներից սկսած՝ չի պատահել, որ երիտասարդ կինը չաղտոտի օղը, երբ գտնվում է ամուսնու զգվանքների մեջ»:

Ահա եւ մի այլ հին անեկոտ (մ.թ.ա. 1600թ.).

«Ինչպե՞ս ուրախացնել տրտմող փարավոնին. մակույկով նեղոտով նրա մոտ ուղարկիր ձկնորոտական ցանցեր հագած աղջիկների, ու նա անպայման դուրս կգա որսի»:

Անեկոտների ձեւը շատ տարբեր կարող է լինել՝ ոտանավորներ, երկխոսություններ, նույնիսկ մեկ դարձված: Այն կարող է նույնիսկ վեպ լինել: Օրինակ՝ «Ձիւն վոր Իվան Չոնկիմի կյանքն ու արտասովոր արկածները»: Դա վեպ-անեկոտ է:

Քաղաքական անեկոտները, որպես կանոն, երկար կյանք չունեն, եւ ծիծաղելի

Բանաստեղծներն են հուշում

են միայն որոշակի պատմական պայմաններում: Դրանք սովորաբար տարածված են ամբողջատիրական երկրներում, երբ փակ են կառավարությանը քննադատելու միջոցները: Իսկ հաճախ նաև միջոց են քաղաքական ազդեցությունը տարածելու համար:

Հայկական ժողովրդական բանահյուսության մեջ շատ հայտնի գվարճախոսներ կան, ովքեր կամ հենց իրենք են սրամիտ կատակի, խոսքի հեղինակը, կամ էլ, ավելի հաճախ, պատմություններ են վերագրվում նրանց: Օրինակ՝ Պոլոզ Մուկուչը, Ծիտրո Ալեքը, Պլը Պուլոն, Վարդանիկը, Ջղեր Խաչիկը...

Ժամանակի խորհրդային անեկոտների գլխավոր կերպարներից էր «հայկական ռադիոն»: Սովորաբար դա այսպես էր սկսվում. «Հայկական ռադիոյին հարցնում են...», որին հետևում էր պարադոքսալ կամ նույնիսկ արտուրդ մի պատասխան՝ երգիծանքի մեծ չափաբանակով: Ասում են, որ հենց հայկական ռադիոն է դառել գործող հերոս, որովհետեւ մի անգամ նրա հաղորդավարներից մեկն ասել է. «Կապիտալիստական աշխարհում մարդը շահագործում է մարդուն, իսկ սոցիալիստականում՝ հակառակը»:

Ահա մի քանի տիպական անեկոտներ՝ «Հայկական ռադիոյից»:

«-Ճի՞շտ է, որ շախմատիստ Պետրոսյանը վիճակախաղով շահել է հազար ռուբլի: -Ճիշտ է, միայն ոչ թե շախմատիստ Պետրոսյանը, այլ «Արարատի» ֆուտբոլիստ Իշտոյանը, եւ ոչ թե հազար, այլ տասը հազար, ու ոչ թե ռուբլի, այլ դոլլար, եւ ոչ թե վիճակախաղով, այլ թղթախաղով, ու ոչ թե հաղթել է, այլ պարտվել»:

«Ի՞նչ է պետք, որպեսզի «Արարատը» դառնա ԽՍՀՄ չեմպիոն:

-Մուկուչյան, Պարկույան ու եւս 9 յան»:

«-Ո՞րն է աշխարհի ամենագեղեցիկ քաղաքը:

Իհարկե՛ երեւանը:

Իսկ ի՞նչ կլինի, եթե երեւանի վրա ատոմային ռումբ ընկնի:

Բացում էլ է սիրուն քաղաք, նամանակավանդ գիշերները»:

Նկարում՝ Պոլոզ Մուկուչի արձանը Գյումրիում:

127) Ջուրակ

«Հեռվում մի ջուրակ հեծում է տխուր»:

Ավետիք Իսահակյան

«Իրիկնաժամին շամբուտը լալիս Ու նվագում էր հին մեղեդիներ, Շամբուտը սուգ էր բերում բերկրալի-Ալեքսիսելով ջուրակի հույզեր»:

Հովհաննես Դազարյան

Ջուրակը լարային աղեղնավոր երաժշտական գործիք է, որն ունի չորս լար: Չայնատարբերման հիմնական միջոցը լարերի միջոցով աղեղը սահեցնելն է: Ծագել է միջնադարյան նվագարաններից, դասական տեսակը մշակվել է 15-16-րդ դարերում: Բայց դեռեւս հնագույն ժամանակներից է մարդուն գրավել որսորդական աղեղի պիլի ձգված լարի հնչողությունը, որ հետագայում հիմք պետք է հանդիսանար լարային գործիքների ստեղծման համար: Եվ բոլորովին պատահական չէ, որ ջուրակի կողագծերը խիստ նման են կենդանիների եղջյուրներից պատրաստված որսորդական աղեղի ձեւին ու ձկնածոն: Բացառիկ արտահայտիչ հնչերանգի, կատարողական հսկայական հնարավորությունների, նրբերանգներով հարուստ ձայնի ու ազնվական տեսքի շնորհիվ այն դարձել է համայնային ու մենակատարային անփոխարինելի նվագարան՝ իրավամբ համարվելով երաժշտական նվագարանների թագուհին:



Ջուրակի հնչելությունը կախված է նյութից, որից պատրաստված է (այդ թվում դրա համասեռության աստիճանից), ձեւից ու տարբեր մասերի հարաբերակցությունից, ներկման ժամանակ օգտագործված լաքից, էլի ուրիշ պարամետրերից:

Ցավոք, կորուսված է այն համբային լուծույթի բաղադրությունը, որի մեջ Ստրադիվարիուսը մշակում էր ջուրակի փայտանյութը:

Տայվանի հետազոտողներն ուսումնասիրել են լավագույն վարպետների ջուրակների (Ստրադիվարիուս, Ամատի, Գվարների) լայնույթա-հաճախային առանձնահատկությունները եւ պարզել, որ դրանք հիանալի են հաղորդում ձայնը, որովհետեւ մոտ են բարձր կանացի ձայների հաճախություններին:

Հայ իրականության մեջ ջուրակի մասին առաջին հիշատակությունները հանդիպում են Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի մեջ (10-րդ դար): 1953թ. Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Դվինի պեղումների ժամանակ գտնվեց 10-րդ դարի նրբագեղ մի ապակե սափոր, որի վրա պատկերված է աղեղնային նվագարանի վրա նվագող երաժիշտ: Նվագարանի չափերը, կիթառաձեւ իրանը, ձախ ձեռքով բռնելու ձեւը, կզակին հենած հորիզոնական դիրքը խոսում են այն մասին, որ դա ջուրակի նախատիպի ամենահին վերարտադրություններից մեկն է աշխարհում:

Հայտնի ջուրակահար էր ֆրանսահայ ժան Տեր-Մերկերյանը: Արամ Խաչատրյանը նրան համարել է իր «Ջուրակի կոնցերտի» լավագույն կատարողը: Ժան Տեր-Մերկերյանը նաև կերպարվեստի մեծ սիրահար էր: Յալթայում այցելելով Վարդգես Սուրենյանցի շիրմին, որ հայկական եկեղեցու բակում է, նա պատմում է, որ այնքան էր սիրում Սուրենյանցին, որ տպավորված ինքն էլ էր պատկերներ նկարում: Երեւանյան նկարիչներից իր ամենամոտ բարեկամը եղավ Սինաս Ավետիսյանը, որի կտավների թափանցիկ, հնչող գույները ընկալում էր իբրեւ երաժշտություն:

Ա. Խաչատրյանի «Ջուրակի կոնցերտը» մեզ է փոխանցում կրքոտ հիացմունք բնության երաժշտությամբ, գեղեցկությամբ ու կենսալի պայծառությամբ: Դա Հայաստանի բնության ձոներգ է՝ կենսուրախ ու տոնական, ռիթմերի խաղով:

... Նկարում՝ Պաբլո Պիկասո, «Ջուրակ եւ խաղող»: Նկարիչը կտավի վրա ջուրակը պատկերել է մասնատված տարբեր մասերից բաղկացած կոմպոզիցիայի տեսքով, որոնք դիտողին առաջարկում են հավաքել մեկտեղ: Պիկասոն նպատակ չի ունեցել ճշտորեն պատկերել գործիքը, այլ ցանկացել է դրոշմել երաժշտությունը, որ կարող է հնչեցնել այդ գործիքը: Սա սինթետիկ կուբիզմն է, որին բնորոշ է ապլիկացիաների ու կոլաժների օգտագործումը:

128) Համակարգիչ

«Հաշվում եք, հաշվում... Հաշվեցեք հապա, Թե ինչ ալիքով, քանի վայրկյանում եվ քանի գրամ արյուն է հոսում աղջկա սրտից Դեպի ամոթխած այտերը նրա, Առաջ բերելով այն բռնկումը ջերմամիջուկային, Որ մինչեւ այսօր, միանտաբար, շիկնանք ենք կոչել...» Պ. Մեւակ

Համակարգիչը սարք է կամ համակարգ, որն ունակ է կատարելու տրված, հստակորեն որոշված, հաջորդականությունը փոփոխող գործողություններ: Դա ավելի հաճախ թվային հաշվարկների գործողություններ են, բայց նաև՝ տվյալներ մշակող, մուտքի-ելքի օպերացիաներ: Գործողությունների հաջորդական կարգադրությունը կոչվում է ծրագիր:

Ավելի հաճախ համակարգիչի ֆունկցիոնալ հանգույցներում օգտագործվում են էլեկտրոնային բաղադրիչներ, բայց այն կարող է կառուցված լինել այլ սկզբունքներով լինել մեխանիկական, կենսաբանական, օպտիկական, քվանտային եւ այլն, աշխատել ի հաշիվ մեխանիկական մասերի, էլեկտրոնների, ֆոտոնների շարժման, կամ պայմանավորված այլ ֆիզիկական երևույթներով:

Ամհատական համակարգիչները դարձել են ժամանակակից տեղեկատվական դարաշրջանի խորհրդանիշ: Բայց իրականում ամենատարածված համակարգիչները ներդրված համակարգիչներն են, որոնք կիրառվում են բարձրագույն տեխնիկաներից սկսած մինչեւ մանկական խաղալիքների մեջ:



Համակարգիչների ունակությունը՝ պահպանելու եւ կատարելու ծրագրեր կոչվող հրամանների ցանցեր, դրանց դարձնում է չափազանց բազմապատասխան գիտություն, արվեստ, կենցաղ եւ այլն:

Կարելու է, որ տարբեր մեծությունների հետ աշխատելիս համակարգիչները լինեն ճշգրիտ եւ արդյունավետ: Համակարգիչներում մեծությունների թվային արժեքների ներկայացման երկու հիմնական միջոցներ կան՝ անալոգային եւ թվային:

Անալոգային (նմանօրինակային) ներկայացման ժամանակ մեծությունն արտացոլվում է տվյալ մեծության արժեքին համապատասխան չափիչ սարքի սլաքի շարժմամբ, կամ լարումով ու հոսանքով: Օրինակներ՝ ավտոմեքենաների արագացափը, սնդիկային ջերմաչափը, միկրոֆոնը: Վերջինիս դեպքում ելքային լարումը գեներացվում է միկրոֆոն ընկնող ձայնային ալիքների լայնույթին համապատասխան: Ելքային լարման փոփոխությունները ճշտորեն կրկնում են մուտքի ձայնի փոփոխություններին: Ամեն դեպքում՝ անալոգային մեծությունները կարող են փոփոխվել (վարիացիայի ենթարկվել) արժեքների անընդհատ տիրույթում:

Բանաստեղծներն են հուշում

սկիզբը՝ էջ 8

Թվային ներկայացման դեպքում մեծություններն արտացոլվում են ոչ թե համեմատությամբ, այլ նշաններով, որ կոչվում են կարգեր: Օրինակ՝ էլեկտրոնային ժամացույցները, ժամանակը հոսում է անընդմեջ, իսկ նրա թվային ներկայացումները չափվում են դիսկրետ արժեքներով (անալոգային ժամացույցներում ցիֆերալատի ցուցմունքներն անընդհատ են):

Այսպիսով, անալոգայինը՝ անընդհատ է, թվայինը՝ քայլ առ քայլը (ընդհատը): Թվային ներկայացման դիսկրետ բնույթի շնորհիվ մեծության արժեքը կարող է ոչ մի երկիմաստություն չի պարունակում, մինչդեռ անալոգի դեպքում տարբեր մեկնաբանություններ կարող են լինել:

Թվային տեխնոլոգիաները գնալով մեծ տարածում են գտնում, որովհետև՝

- *Դրանք հեշտ են մշակվում. բանալի-սխեմաներում կարելու են ոչ թե լարման կամ հոսանքի ճշգրիտ արժեքները, այլ միայն այն տիրույթը (դիապազոնը)՝ բարձր կամ ցածր ազդանշան, որ իրենք ընկնում են:*

- *Չեշտ է ինֆորմացիայի պահպանումը. գերմեծ ծավալի ինֆորմացիաներ կարելի է պահպանել փոքր ֆիզիկական տարածության մեջ: Անալոգայինի դեպքում ինֆորմացիայի պահպանման խիստ սահմանափակ հնարավորություններ կան:*

- *Մեծ ճշգրտություն ունեն: Անալոգայինի դեպքում հոսանքի ուժի եւ լարման արժեքները կախված են լարումների պատահական ֆլուկտուացիաներից (աղմուկներից): Թվայինի դեպքում ճշգրիտ արժեքների երկու չլինելը աղմուկը դարձնում է ոչ այնքան կարելուր ազդանշանի մակարդակը որոշելիս:*

- *Գործողությունները ծրագրավորելու մեծ հնարավորություններ կան:*

Թվային տեխնիկայի սահմանափակությունն այն է, որ իրական աշխարհը հիմնականում անալոգային է: Որպեսզի օգտագործվեն թվային տեխնիկայի առավելությունները՝ աշխատելիս՝ պետք է հետեւել երեք սկզբունքների.


- *իրական մուտքային անալոգային արժեքները վերածել թվային տեսքի,*

- *մշակել թվային ինֆորմացիան,*

- *թվային ելքային ազդանշանները կրկին վերածել իրական անալոգայինի:*

Վստահաբար թվային տեխնոլոգիաներով աշխատող համակարգիչները շարունակելու են իրենց գերաբազմերիտունը մեր կյանքի բոլոր բնագավառները, բացելով պատուհաններ մուլտիմեդիայի, ռեալիտի, ուր մտնել չէինք էլ երազում: Այսպես, օրինակ, կարողավ ինչ-որ տեղանքի մասին, որը ձեզ հիշ հետու է ընդամենը ... 5000 կմ, դուք կարող եք զգալ ձեր ներկայությունն այնտեղ: Կամ երեխաները դպրոցում կարող են իրենց հասակակիցների հետ մտքեր փոխանակել՝ «թափառելով» ողջ աշխարհով մեկ: Երբ դուք կուզենաք դիտել որեւէ հեռուստատեսային ծրագիր հարմար որեւէ ժամի, ողջ ինֆորմացիան ձեզ կփոխանցվի 1 վայրկյանում եւ կպահպանվի ձեր համակարգիչի հիշողության մեջ ինչքան ուզեք: Եվ սա միայն այսօր երեւացող ապագայի տեսլականի այսբերգն է...

... **Նկարում՝ երկրագնդի տեղամասի եռաչափ քարտեզ՝** արված համակարգչային ծրագրի օգնությամբ:



129) Հայերեն

«Մենք ունենք աշխարհում Մասիս սար, Այդ սարը գալիս է դարերեն, Նա անվերջ խոսում է Հայերեն»:

Խաչիկ Դաշտենց

«Հայերենը Աստծո հետ հաղորդակցվելու լեզուն է»:

Ջորջ Բայրոն



Հայերենը հնդեվրոպական ընտանիքի լեզու է: Համաձայն Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի հետազոտողների այն աշխարհի 50 ամենաազդեցիկ լեզուներից մեկն է:

Գրեյը եւ Աթլինսոնը կարծում են, որ նախահայկական լեզուն ծագել է Հայկական լեռնաշխարհում եւ գոյություն ունի առնվազն մ.թ.ա. 7300 թվականից: Լեզվաբան Վյաչեսլավ Իվանովի կարծիքով եւ ժամանակակից գենետիկական հետազոտությունների հիմնավորմամբ՝ հայերի էթնոգենեզն ավարտվել է մ.թ.ա. 1200թ.-ից շատ առաջ, երբ ընկել է բրոնզե դարի Արեւելյան միջերկրածովյան քաղաքակրթությունը՝ մ.թ.ա. 2000-3000թթ. միջեւ, անիվի գյուտի, ձիու ընտելացման շրջանում: Ակադեմիկոս Չերեմնին կարծում էր, որ Ջորջաց քարերի հուշարձանախումբը հնագույն աստղադիտարան է, որը 7,5 հազար տարեկան է: Դա նշանակում է, որ մեր ազգը ծնված-ապրած-գարգացած պետք է լինի, որ հասնի այդ մակարդակին առնվազն դրանից 3 անգամ շատ տարիներ առաջ (մոտ 22 հազար տարեկան հայ ժողովուրդ՝ այդքան տարեկան է հայերենը...):

Քեմբրիջի համալսարանի խոշոր հայագետ Ջեյմս Քլակսոնը մերժում է ավելի վաղ առաջ քաշված վարկածը հայերենի ու հունարենի գենետիկ կապի մասին. հայերենն ավելի շատ մոտ է հնդիրանական ու բալթասլավոնական լեզուներին: Իսկ Յուրբշմանը հիմնավորել է, որ հայերենին իրանական բնույթ տվող բառերը պարսկական փոխառություններ են, իսկ հայերենը իր բնիկ բառապաշարով, հնդեվրոպական ու քերականական կառուցվածքով անկախ դիրք է գրավում հնդեվրոպական լեզվաընտանիքում:

Համարվում է, որ հնդեվրոպական լեզվում բառերի թիվը եղել է 60000, այժմյան գրական հայերեն բառերի թիվը մոտ 135000 է, իսկ ամբողջը՝ բարբառներով եւ խոսվածքներով հանդերձ՝ 350000 բառ: Դրանց մեջ կան շատ փոխառություններ:

Ամենաշատը իրանական փոխառություններն են (ըստ Աճառյանի՝ 1400 բառ), հունականները՝ մոտ 900 են այլն: Թուրքերենից փոխառվել է մոտ 20 բառ:

... **Նկարում՝ Գրիգոր Խանջյան, «Հայոց այբուբեն» գրքից:** Նկարիչը պատկերել է Մեսրոպ Մաշտոցին այբուբենի տախտակը ձեռքին, շրջապատված աշակերտներով:

130) Սարսուռներ

«Կենսանորոգ շունչ կը բերե Ըսթափանքի կազդույրն այս գով, Բայց ցորեկին դեռ կը տեսե Բազմալեզու տեղին հրավառ»:


Միսաք Մեծարենց

«Կռունկները պարան-պարան Աջբերիս մեջ առան-տարան Իմ Շաքիի Նիագարան... Սարսուռաց սարն Աղոթարան»:

Հ. Սահյան

Օրգանիզմի հակազդեցությունը ջերմային գործոնների հանդեպ արտահայտվում է սարսուռով, տեմդով: Այն ունի պաշտպանական, հարմարվողական նշանակություն: Ջերմածին են սովորաբար սպիտակուցային բնույթի եւ ավելի պարզ նյութերը: Ջերմածինները կարող են գոյանալ նաեւ օրգանիզմում, ինչպես, օրինակ, հյուսվածքների քայքայման նյութերը վնասվածքի, այրվածքի, տարածում արյունազեղումների եւ այլնի ժամանակ: Դրանք ազդում են ջերմակարգավորման կենտրոնների դրդելիության վրա, որի հետեւանքով ջերմարտադրությունը մեծանում է, ջերմատվությունը՝ փոքրանում, իսկ ջերմությունը կուտակվում է եւ հանգեցնում ջերմաստիճանի բարձրացման: Դա խթանում է օրգանիզմի պաշտպանողական ուժերը, հաճախ սպանիչ ազդեցություն ունենում հիվանդության հարուցիչների վրա: Բայց որոշ դեպքերում բարձր ջերմաստիճանները կարող են բացասական ազդեցություն ունենալ նյարդային համակարգի վրա՝ առաջացնելով գառաացանք, զգայախաբույրում:

Դողերոցի ժամանակ ջերմագոյացումը նախ մեծանում է առավելապես մկաններում, իսկ ջերմատվությունը փոքրանում է մաշկի արյան անոթների նեղացման եւ քրտնարտադրության կտրուկ նվազման հաշվին: Այնուհետեւ, ջերմատվությունը մեծանում է եւ հավասարակշռում բարձրացած ջերմագոյացումը, որն էլ դադարեցնում է ջերմաստիճանի հետագա բարձրացումը: Հաջորդիվ ջերմատվությունը կտրուկ մեծանում է եւ գերազանցում ջերմարտադրությունը, որ եւ հանգեցնում է ջերմաստիճանի իջեցմանը: Մաշկի արյան անոթները լայնանում են, երբեմն դրա հետեւանքով նկատվում է զարկերակային ճնշման զգալի իջեցում:



12-րդ դարի հայ մեծագույն բժիշկ Մխիթար Հերացին իր «Ջերմանց մխիթարութիւն» գրքում ասում է. «Անուանեցանք «Ջերմանց մխիթարութիւն», «զի սա մխիթարե զբժիշկն ուսմամբ, իսկ զհիւանդն՝ առողջությամբ»:

Սարսուռներ բառը հայերենում բազում այլ փոխաբերական նշանակություններ էլ ունի: Դա մի դեպքում սոսկում, սարսափ է,

ուրիշ դեպքում՝ ծայրի՝ նվազի, թրթիռ, ելելէջ: Դա ցուրտ է ու սառնություն, հուր, կրակ ու ոգեւորություն, մեծ հուզմունք ու անհանգստություն:

... **Նկարում՝ Դ. Վարուժանի «Սարսուռներ» բանաստեղծական փնջի ժողովածուի շապիկը:**

131) Շանթարգել

«Արպե՛լ, ապրե՛լ, ապրել մեկ տե՛ղ, Կյանքդ խառնել նրանց կյանքին, Տառապանքդ՝ տառապանքին, Ցանքդ՝ ցանքին, Եվ ենթարկվել նրանց կամքին, Նրանց կամքն էլ քեզ ենթարկել,- Դառնալ ե՛ւ շանթ, ե՛ւ շանթարգել»:

Պ. Մեւակ



Շանթարգելը հարմարանք է՝ կայծակի հարվածից պաշտպանվելու համար: Գործողության սկզբունքը հետեւյալն է: Կայծակի ժամանակ երկրի մակերեսային վրա մակածվում են մեծ լիցքեր, եւ ծագում է ուժեղ մագնիսական դաշտ: Դաշտի լարվածությունը հատկապես մեծ է սուր հաղորդիչների մոտ, այդ պատճառով էլ շանթարգելի ծայրին վառվում է պսակային պարպումը: Դրա արդյունքում՝ օդը շանթարգելի մոտ ուժեղ իոնանում է, սուր ծայրի մոտերքում էլեկտրական լարվածությունը՝ փոքրանում: Այլեւս մակածված լիցքերը չեն կարող կուտակվել շինության վրա եւ կայծակի առաջացման հավանականությունը փոքրանում է: Իսկ երբ շատ հազվադեպ այն, այնուամենայնիվ, ծագում է, կայծակը դուրս է գալիս շանթարգելից՝ վնասվածքներ չպատճառելով:

Շանթարգելը մետաղե սրածայր ձող է, որը տեղակայվում է տվյալ պաշտպանող շինության տանիքից հնարավորինս վեր: Ձողը միացվում է մետաղաճուղային, որն անցկացվում է շինության պատերի երկայնքով՝ վերից վար: ճուպանի մյուս ծայրին գողվում է մետաղական առարկա, որը խոր թաղվում է հողի մեջ: Շանթարգելի ծայրին ամպի էլեկտրական դաշտի ազդեցությամբ ամենաշատ լիցքն է կուտակվում, քանի որ շանթարգելի սուր ծայրի հեռավորությունը ամենափոքրն է ամպից: Օդում առկա ազատ էլեկտրոնները, ձգվելով դեպի շանթարգելը, չեզոքացնում են նրա դրական լիցքը: Շանթարգելի դրական լիցքը նրա սուր ծայրից «հոսում է» դուրս՝ շինությունը պաշտպանելով կայծակի հարվածից:

**Չարուհի ՊԵՏՐՈՍՅԱՆ
Շիրակի մարզի Արթիկի հ. 3 ավագ դպրոցի ուսուցչուհի, բնագետ**

**Արիստ ԴԵՏՐՈՍՅԱՆ
Շիրակի մարզի Արթիկի հ. 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի, բանասեր**

Գրականագիտական

Ցնորական Տերյանը

սկզբը՝ նախորդ համարում

Գերմանացի մեծ բանաստեղծի ու մտածողի գեղարվեստական կերպարի ստեղծմանն է նվիրված գրականության եւ արվեստի թանգարանի Չարենցի ֆոնդում 108 համարանիշով պահվող «Եվ որքան տխուր է իսկապես...» տողով սկսվող պոեմը (տպագրվել է «Նորահայտ էջեր» գրքում):

Այդ ինքնատիպ պոեմի ինքնագիրը թերի է, համարակալումն սկսվում է 6-րդ էջից եւ հասնում մինչեւ 14-րդ էջը: Պահպանված մասով բավարար չափով պատկերացում է տալիս Չարենցի մտահղացման եւ իր առջեւ դրված խնդրի իրականացման չափի մասին: Ինչ է 1936 կամ 1937 թվականներին: ուցե այն օրերի արգասիք է, երբ թարգմանում էր «Ֆաուստ»-ի նոր հատվածները: Այն տեսքով ինչպես որ պահպանվել է՝ ըստ ամենայնի առաջին գրի արդյունք է:

Սկսվում է հանճարեղ գրողի եւ պետական պաշտոնյայի դիրքերի հակադրումով: Մի կողմում «երգի արքան» է, մյուսում «խղճուկ միմիստը»: Չարենցը Գյոթեին համարում է «վերջին օլիմպացի», որի համար, սակայն, անհարիր է «ոգու ողջ խոյանքին տիրող» նրա վիճակը: Այնուհետեւ Գյոթեն գնահատվում է որպես տիեզերքի գաղտնիքներին հասու փիլիսոփա: Քննելով իր հերոսի պետական ու պետական վարքը՝ Չարենցը մի շրջադարձով վերաճշտում է իր վերաբերմունքը եւ փառաբանում պոետ-փիլիսոփային:

O, ինչ եմ ասում... արդարեւ,- Այդ վերջին օլիմպացին Ոչ միայն պոետ հանճարեղ- Այլեւ այր էր- անչափ խելացի ...

Գալիս է Գյոթեի իրատես եւ շրջահայաց դիտողականությունը, գիտական փորձերը բնութագրելու պահը, եւ Չարենցը, կայսրինը կայսրին մատուցելուց, այսինքն՝ պաշտոնյա Գյոթեի մասին իր կարծիքը հայտնելուց հետո, հասնում է Աստուծուն Աստուծան վերադարձնելու անհրաժեշտությանը:

Ազգային եւ հանրային կյանքով իմաստավորված կենսագրական պոեմը Չարենցի տարերք էր, որի ներշնչանքը ժամանակի ընթացքում ծնունդ է տվել գրական ու մշակութային գործիչներին նվիրված ոչ քիչ թվով երկերի՝ «Չարենց-Նամե», «Անակնկալ հանդիպում...», «Դեպի լյառը Մասիս», «Կոմիտասի հիշատակին», «ովք Արուսին», «Դոֆինը Մայրական» հնչյունների շարքը, ընդ որում իսկապես Ծերենցին նվիրված պոեմը, նաեւ այլ գործեր, որոնց կողքին իր տեղը պետք է ունենա եւ այս երկը:

Չարենցը Գյոթեին մարմնավորել է մուսկայն սկզբունքով, որով վերջինս կերտել է Ֆաուստի կերպարը: Մեծ բանաստեղծը երեսուն է աշխարհի ամեղծվածները մեկնելու բնագետի ու փիլիսոփայի իր հարցասիրություններով: Նրա մտքի առջեւ ծավալվում է տիեզերքը, բացվում է բնության աշխարհը՝ բույսերով, կենդանիներով, ջրերով ու քարերով, բազմազան երանգավորումներով մեջ ծիածանվում են աշխարհը գեղարվեստորդ գույները: Չարենցը նկատի ունի այն, որ Գյոթեն գույների տեսության եւ շատ այլ հարցերի մասին գրել է առանձին աշխատություններ, գիտականորեն զննել տիեզերքը: Եվ, ընդհանրապես, ըստ էքսերմանի, Գյոթեն իր գիտական հայտնագործությունները երբեմն ավելի բարձր էր դասում, քան՝ գեղարվեստական ստեղծագործությունները: Եվ հաճախակի կրկնում էր, որ իր գիտական աշխատանքներն այնպես չեն գնահատվում, ինչպես հարկն է: Այսպեսով հանդերձ, Գյոթեն միշտ հետամուտ էր մարդու ներքին եռության ճանաչողությանը, որը, ինչքանով ճանաչելի էր, ինչպես բնության աշխարհը, նույնքանով էլ անճանաչելի էր իր անկրկնելի անհատականությամբ եւ փոփոխական եռությամբ: Եվ դրա համար որպես ճանաչողության բարձրագույն նպատակ մնաց մարդը:

Պոեմը Չարենցը գրել է ազատ, հոսանուտ ներշնչանքով, անմիջական պոռթկումով՝ առանց իրեն կաշկանդելու հանգ ու չափի պարտադիր «բնութային»: Ինչ է, դարձյալ պահպանելով ներքին հոգեւոր կապը մեծ բանաստեղծի հետ եւ անգամ մի տեղ խոստովանելով, թե, ահա, Գյոթեն այսքան բան գիտի, իսկ ինքը՝ ոչ: Կարելի է ենթադրել, որ աշխարհաճանաչողության անհագուրդ պահանջն է նրան հաղորդակցել Գյոթեին ու նաեւ հնարավորություն տվել վիճելու նրա հետ, բայցեւ, առավել չափով, հիանալու նրանով:

Առհասարակ, դասական ժառանգության, մասնավորապես Գյոթեի ստեղծագործության հանդեպ Չարենցի վերաբերմունքը նկատվել ու գնահատվել է դեռեւս 1936 թ.: «Չարենցը եւ կլասիկ պոեզիան» հոդվածում Սուրեն Զարուբյանյանը գրում էր. «Պատահական չէ, որ հանճարեղ Դանթեին հաջորդում է կուլտուրական իսկա Գյոթեն: Գյոթե եւ Չարենցը - դարձյալ մի չափազանց հետաքրքրական պրոբլեմ: Գաղտնիքները վերջին տարիներին, երբ այնքան լայնացավ ու խորացավ Չարենցի պոետական ստեղծագործության հունը, նա խոշոր տեղ է հատկացնում Գյոթեին» («Գրական թերթ», 1936, թիվ 4, 12 փետրվար):

Ահա եւ Չարենցի համակողմանի պատասխանը:

ԺՁ. «Երեքի» դեկլարացիան եւ Տերյանը

«Երեքի» դեկլարացիան եւս հանգամանորեն կբացատրեն, որովհետեւ, այսպես, թե այնպես, կապված է Տերյանի անվան հետ, եւ դրանով մենք ոչ թե կհեռանանք մեր բուն նյութից, այլ զարգացման մեջ կբացահայտենք Տերյան-Չարենց կապի մի բարդ հանգույցը:

